

ՆՈՌԱՌԱՅ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 90, ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ 2012





ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ՝ ԻՐԱՆԻ ՀԱՅՈՑ

Իրանի Հայոց երեք թեմերին՝ Թեհրան, Ատրպատական եւ Սպահան մեր կատարած հովապետական այցելութիւնից Անթիլիասի մայրավանք վերադարձին, սիրոյ, օրհնութեան ու գնահատանքի սոյն հայրապետական գիրը յղում ենք Իրանի մեր ժողովրդի սիրելի գաւակներին: Արդարեւ, մեր կատարած այս վերջին հովապետական այցելութիւնը (մայիսի 7-24, 2012) վեցերորդն էր Թեհրանի Թեմին ու չորրորդը՝ Սպահանի եւ հինգերորդը՝ Ատրպատականի թեմերին: Իր բազմազան ծրագրերով եւ այլազան ձեռնարկներով ու հանդիպումներով այս վերջին հովապետական այցելութիւնն եղաւ առաւել համապարփակ: Մեր ցանկութիւնն էր, որ այս անգամ հովապետական այցելութեան առանցքն ու կիզակէտը հանդիսանար ժողովուրդը, հեռու մնալով պետական-պաշտօնական ու դիւանագիտական բնոյթ կրող հանդիպումներից: Ուրախ ենք, որ այդպէ՛ս էլ եղաւ:

Շուրջ երեք շաբաթներ շարունակ եղանք մեր ժողովրդի գաւակների հետ՝ եկեղեցիներում, մշակութային, կրթական, հասարակական ու բարեսիրական կենտրոններում: Սիրոյ ու գնահատանքի մեր խօսքն ուղղեցինք ժողովրդին, ինչպէս նաեւ առիթներ ստեղծեցինք գրուցելու մեր ժողովրդի գաւակների հետ՝ աւելի մօտիկից իրազեկ դառնալու նրանց դժարութիւններին ու մտահոգութիւններին եւ դիմագրաւած մարտահրաւէրներին: Թէեւ Ֆիզիկապէս յոգնեցուցիչ եղաւ հովապետական այս այցելութիւնը, սակայն հոգեպէս՝ գոհացուցիչ ու հարստացուցիչ: Մեր նախորդ այցելութիւնների ընթացքում ճանաչել էինք Իրանի մեր գաւակներին, սակայն այս անգամ մեր ճանաչումն եղաւ աւելի հարագատ ու ամբողջական: Արդարեւ, մեր անձի նկատմամբ մեր ժողովրդի ցուցաբերած շեւք սիրոյ ու խոր յարգանքի արտայայտութիւնները մենք համարում ենք Հայ Եկեղեցու նկատմամբ նրանց ունեցած ամուր հաւատարմութեան պերճախօս վկայութիւնը:

Այս առիթով առաջին հերթին մեր հայրական սիրոյ ու գնահատանքի ողջոյնն ենք ուղղում երեք թեմերի առաջնորդներին՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արք. Սարգսեանին, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանին եւ Ատրպատականի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Գրիգոր Մ. վրդ. Չիֆթճեանին, որոնք բարձրագոյն աստիճանի նւիրումով ու նախանձախնդրութեամբ գլխավորեցին հովապետական այցելութեանն առնչող աշխատանքները:

Հայրապետական օրհնութեամբ ողջունում ենք երեք թեմերի ազգ- իշխանութիւններին եւ մեր կեանքում գործող կազմակերպութիւններին ու միութիւններին, որոնք գործնապէս մասնակից դարձան մեր այցելութեան ծրագրերին ու հանդիպումներին:

Հայրական սիրոյ եւ օրհնութեան մեր խօսքն ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր գաւակներին, որոնց ստւարթով ներկայութիւնն եկեղեցական արարողութիւններին ու հրապարակային ձեռնարկներին խորապէս յուզեցին եւ միանգամայն գօտեպնդեցին մեզ:

Անցնող երեք շաբաթների ընթացքում գանազան շրջաններում եւ այլազան առիթներով մեր ժողովրդի հետ լինելով՝ ո՛չ միայն մեր հայրական պատգամն ուղղեցինք նրանց, այլ նաեւ լսեցինք նրանց եւ ականատես եղանք

մի շարք երեւոյթների եւ մտահոգութիւնների, որոնք անմիջականօրէն առնչուում են Իրանի հայութեան ներկային ու ապագային: Բնականաբար, մեր պատգամների, գրոյցների, ժողովական թէ հրապարակային հանդիպումների ընթացքում որոշ երեւոյթների հպանցիկ կերպով անդրադարձանք: Հայրապետական սիրոյ եւ օրհնութեան սոյն գրով ցանկանում ենք մի շարք ընդգծումներ ու յիշեցումներ կատարել՝ ի խնդիր համայնքի կեանքի առաւել կազմակերպման ու ծաղկման: Առաջին հերթին, ցանկանում ենք երեք հաստատումներ կատարել.

ա) **Իրանի հայութիւնը կազմակերպ ու կենսունակ համայնք է:** Իրանի հայութեան հաւաքական կեանքի բոլոր մարզերում ու բոլոր մակարդակներում տեսանք կազմակերպածութիւն եւ աշխուժութիւն: Մի երեւոյթ, որ պատահական չէ. դրա թիկունքում գտնուում է հետեւողական ու լուրջ աշխատանք՝ հոգեւոր թէ աշխարհական կառույցների ու պատասխանատուների կողմից: Ընդհանրապէս, այն կարծիքը կայ, որ Իրանի հայութիւնը նահանջի մէջ է, որովհետեւ վերջին տարիներում արտագաղթը նոր թափ է ստացել համայնքում: Այս մտահոգիչ երեւոյթը ո՛չ մի ձեւով ժխտական անդրադարձ չի ունեցել համայնքի ներքին կենսունակութեան վրայ: Արդարեւ, արտագաղթը հայրենամերձ գաղթօջախներից դէպի արեւմտեան երկրներ մենք համարում ենք մեծապէս վնասաբեր, իսկ Հայաստանից՝ աններելի: Հարկ է գերագոյն ճիգ թափել՝ կասեցնելու համար այս ազգային արիւնահոսութիւնը, որը կարող է վտանգել մեր ազգի ու հայրենիքի ապագան:

բ) **Իրանի հայութիւնը միակամ ու ներդաշնակ համայնք է:** Մեր ելոյթների ընթացքում գնահատեցինք այս դրական երեւոյթը: Միակամութիւնն ու ներդաշնակութիւնը երաշխիք են համայնքի ներքին հօրութեան: Սակայն, միակամութիւն չի նշանակում տեսակէտների ու մօտեցումների միատեսակութիւն: Առողջ ու կառուցողական քննադատութիւնը՝ մեր ազգին կամ համայնքին յուզող ընդհանրական հարցերի շուրջ, անհրաժեշտ է: Նոյնպէս ներդաշնակութիւն չի նշանակում միատեսակ մտածելակերպ ու գործելակերպ, այլ՝ այնպիսի բազմազանութիւն, որ ներքին յարակցութիւն ու նպատակասլաց ուղղւածութիւն է առաջացնում: Սպասելի է, որ այս հասկացողութեամբ աւելի լայն խորք ու ծաւալ ստանայ համայնքում տիրող միասնականութիւնը:

գ) **Իրանի հայութիւնը իր արմատներին ամրօրէն կառչած համայնք է:** Այս գօտեպնդիչ երեւոյթին ականատես եղանք ոչ միայն հայահոծ շրջաններում, այլեւ՝ նոյնիսկ հեռւոր շրջաններում, որտեղ հայութեան թիւը զգալիօրէն նւազել է: Հայ լեզուն բոլոր տարիքի հայորդիների շուրթերի վրայ ներկայութիւն է՝ հեռու ամէն տեսակ աղաւաղումներից ու օտար ազդեցութիւններից: Մեր մշակութային արժէքներն ու ազգային-եկեղեցական աւանդութիւնները տիրապետող ներկայութիւն են դպրոցներում, սրահներում ու ընտանիքներում: Մեր ժողովրդի գերագոյն ձգտումները ամենօրեայ ապրում են հայութեան հաւաքական կեանքում: Արդարեւ, մեզ համար խորապէս յուզիչ պահ էր, երբ Կասպից ծովի ափում գտնուող Անգալիի (որտեղ բնակուում են շուրջ 23 ընտանիքներ) եկեղեցու պատի վրայ խոշոր տառերով արձանագրւած տեսանք հետեւեալ բառերը. «Օտար քամի որքան փչի, մեզ իր փոշով չի ծածկի»...

Վերում նշած դրական երեւոյթները պէտք է աւելի ամրանան ու ծաւալեն՝ վերանորոգ հաւատքով, առաւել աշխատանքով ու ապագայատեսիլ մօտեցումով: Բաւական չէ եղածով գոհանալ. անհրաժեշտ է եղածը աւելի՛ հարստացնել, լաւից լաւագոյնին ձգտելով՝ համայնքի բոլոր կառույցների ու գաւակների մասնակցութեամբ: Այս հաւաքական աշխատանքը պահանջում է՝ երկարաշունչ ու համապարփակ ծրագրում, առաջնահերթութիւնների յատակեցում, գործելակերպի ու գործընթացի ճշտորոշում ու ապա՝ հանգրւանային իրագործում:

Համայնքը անհատ հայերի հաւաքականութիւն չէ. այն ինքնութիւն, մշակոյթ ու պատմութիւն ունեցող մեր ազգի գաւակների հաւաքական կեանքն է՝ համայնքային կառույցների շուրջ համախմբւած: Համայնքը կենսունակ է դառնում, երբ այն բաղկացնող կառույցներն առողջ ու աշխոյժ են: Մեր սպասումն է, որ Իրանի հայութեան կեանքում գործող բոլոր կառույցները դառնան աւելի՛ կենսունակ՝ մեր գաւակներին իրենց շուրջ համախմբելով ու նրանց գործունէութիւնն աւելի կազմակերպելով: Այս գործընթացը պահանջում է՝ կառույցների վերարժեւորում, վերադասաւորում ու վերանորոգում: Համաշխարհայնացած ներկայ հասարակութիւնը իր նոր մտածելակերպով ու գործելակերպով մեզ հրաւիրում է քննական վերանայման ենթարկել մեր կառույցները, այլապէս՝ դրանք կը դառնան ժամանակավրէպ: Այս հայեցակէտով ու հեռանկարով անհրաժեշտ է յատուկ

կարեւորութիւն տալ հետեւեալ բնագաւառներին.

ա.- **Եկեղեցին** մեր համայնքային կեանքի սիրտն է. նրա առողջ տրոփիւնը լայն չափով առնչուում է մէկ կողմից ժողովրդին ծառայելու իր յանձնառութեամբ եւ միւս կողմից՝ ժողովրդի գործօն մասնակցութեամբ նրա կեանքին ու վկայութեանը: Հոգեկան խոր գոհունակութեամբ նկատեցինք, որ մեր ծխական եկեղեցիները իրենց հոգեւոր առաջնորդների ու մշակների եւ թեմական իշխանութիւնների նւիրեալ աշխատանքով ծառայական ներկայութիւն են ժողովրդի կեանքում: Արդարեւ, կրօնական դաստիարակութեանն առնչուող աշխատանքները, հասարակական ծառայութիւնը, կրօնաբոյր հրատարակութիւնները, ուխտագնացութիւնների կազմակերպումը, միջեկեղեցական ու միջկրօնական հանդիպումները եւ աւելին՝ ժողովրդի երկիւղած մասնակցութիւնը եկեղեցական արարողութիւններին շօշափելի արտայայտութիւններն են մեր եկեղեցու անփոխարինելի դերակատարութեան: Ազգային առաջնորդարանների գլխաւորութեամբ կատարուող այս աշխատանքները վերանորոգ թափով պէտք է շարունակեն: Այս ծիրում անհրաժեշտ է առաջնահերթութիւնը տալ ծխական կեանքի առաւել կազմակերպմանը, հոգեւոր հովիւների, սարկաւազների ու դպիրների պատրաստութեանն ու վերաորակաւորմանը: Հովիւ-ժողովուրդ փոխյարաբերութեան սերտացումը եւս համարում ենք հրամայական:

բ.- **Դպրոցը** իր քրիստոնէական ու հայեցի դաստիարակութեամբ եկեղեցու կողքին կենտրոնական ներկայութիւն է համայնքի կեանքում: Հակառակ հայ դպրոցի դիմագրաւած լուրջ դժարութիւններին ու մտահոգութիւններին՝ մեր կրթական կառույցները շարունակում են մնալ նոր սերունդների հայեցի ինքնութիւնը կազմաւորող հայակերտման վառ օջախներ: Վստահ ենք, որ պատասխանատու մարմինները առաւել նւիրում են շարունակելու իրենց պատասխանատուութիւնը՝ հայ դպրոցի նկատմամբ: Հայ դպրոցը եւս կարիք ունի վերանորոգման: Այս ուղղութեամբ, անհրաժեշտութեան պարագայում, հարկ է ձեռնարկել մի շարք կրթական կառույցների վերադասաւորմանն ու միաւորմանը՝ նկատի ունենալով ընտանիքների տեղաշարժն ու նոր հայահոծ շրջանների առաջացումը: Նաեւ հայերէն նոր դասագրքերի պատրաստութիւնն ու մանկավարժական մեթոդների վերանայումը, ինչպէս նաեւ լսողատեսողական տեխնոլոգիայի ճիշտ օգտագործումն ընդհանրապէս կրթական ծրագրերի իրագործման ու յատկապէս քրիստոնէական ու հայեցի դաստիարակութեան մէջ դարձել է անյետաձգելի անհրաժեշտութիւն:

գ.- **Մշակույթը** կազմում է մեր ինքնութեան կերտման ու հայապահպանման կարեւոր գործօններից մէկը: Մի համայնքի կեանքում եկեղեցու եւ դպրոցի շարքում միշտ յատուկ կարեւորութիւն է տրուում հայ մշակույթին, մանաւանդ՝ սփիւռքեան ապահայացնող պայմաններում: Իրանի հայութեան մօտ դարձեալ խոր գոհունակութեամբ վկայ եղանք հայ մշակութային արժէքների տիրական ներկայութեանը: Արդարեւ, մեծ թւով երգչախմբերի գոյութիւնը, բոլոր տարիքի հայորդիների շուրթերի վրայ հայ երգի ու բանաստեղծութեան մնայուն ներկայութիւնը, ընտանիքներում մեր կրօնական, ազգային ու մշակութային ավանդութիւնների առողջ պահպանումը եւ ընդհանրապէս հայ մշակույթի նկատմամբ իրանահայութեան ցուցաբերած նախանձախնդրութիւնն ու հաւատարմութիւնը մեծապէս յատկանշական երեւոյթ է, որ պէտք է նոր հունաւորումներով աւելի արմատանայ, յատկապէս՝ նոր սերունդի կեանքում:

դ.- **Պահանջատիրութիւնը**, ինչպէս որեւէ համայնքի, Իրանի հայութեան ամենօրեայ կեանքում եւս գոյութեան կարեւորութիւն է՝ որպէս տաղանայ, պայքար ու ձգտում: Ինչպէս մեր պատգամներում շեշտեցինք, մեր ազգային պահանջատիրութիւնը պէտք է դուրս գայ սոսկ ոգեկոչման ու յիշեցման սահմաններից եւ վերածւի գործօն մասնակցութեան այն բոլոր աշխատանքներին՝ տեղական, շրջանային թէ՛ համահայկական, որոնց նպատակն է հայ ժողովրդի Յեղասպանութեան ճանաչումն ու իրաւունքների հատուցումը: Որպէս մի իսլամական կարեւոր երկրում հաստատուած գաղթօջախ՝ իրանահայութեան դերը՝ հայ ժողովրդի պահանջատիրական պայքարի ծիրում, համարում ենք խիստ կարեւոր՝ յատկապէս Իսլամական աշխարհում մեր իրաւունքները հետապնդելու իմաստով:

ե.- **Երիտասարդութիւնը** կազմում է հասարակութեան ողնասիւնը: Հայ եկեղեցու եւ ազգի կեանքում պէտք է յատուկ կարեւորութիւն տալ երիտասարդութեանը: Մեր ազգի ապագան կախում ունի մեր համահայ-

կական առաջնահերթութիւններն ու մարտահրաւէրներն զծով երիտասարդութեան բերած նպաստից: Արդ, իրանահայութեան հաւաքական կեանքի մայր էջում երիտասարդութեան ազդու ներկայութիւնն ու գործօն մասնակցութիւնը համարում ենք խիստ անհրաժեշտ: Մեր երիտասարդութիւնը չպէտք է միայն յատուկ առիթներով իր ներկայութիւնը զգալի դարձնի: Նա պէտք է մեծ տեղ գրաւի մեր կառոյցներում՝ նոյնիսկ առաջնորդողի դերակատարութեամբ: Պէտք է վստահել մեր երիտասարդ սերունդին:

Գ.- **Մարդուժը** մի ազգի կամ մի կառոյցի հզօրութեան աղբիւրն է ու նրա առաջադիմութեան երաշխիքը: Աստուած մարդուն ստեղծեց ո՛չ միայն, որպէսզի իր ստեղծագործութեան պահպանը դառնայ, այլ նաեւ՝ այն աւելի՛ ծաղկեցնի: Հետեւաբար՝ մարդը արժէք է Աստծու համար: Որեւէ ժամանակից աւելի՝ մեր ազգի դիմագրաւած մտահոգութիւններն ու կարիքները, ինչպէս նաեւ համաշխարհայնացած ներկայ աշխարհի մարտահրաւէրները մեզ մղում են՝ բարձրագոյն աստիճանի կարեւորութիւն ընծայելու մարդուժին: այլապէս՝ մեր կեանքը կաղքատանայ ու կը ցամաքի՝ ամէ՛ն իմաստով: Իրանահայութիւնը մարդուժի մեծ պաշար ունի: Անհրաժեշտ է այն առաւելագոյն չափով ու ճիշտ կերպով օգտագործել տարբեր բնագաւառներում: Այս ուղղութեամբ վերջին տարիներում առնուող քայլերը պէտք է շարունակել առաւել աշխուժութեամբ ու յստակ ծրագրումով:

Է.- **Հայաստանի ու Ղարաբաղի հզօրացումը** համազգային առաջնահերթութիւն է: Իւրաքանչիւր գաղթօջախ եւ իւրաքանչիւր հայ իր առաւելագոյնը պէտք է տայ այս նւիրական նպատակին: Որպէս հայրենամերձ գաղթօջախ՝ իրանահայութիւնն իր գործօն մասնակցութիւնն է բերել Հայաստանի վերաշինութեան աշխատանքներին: Մեր թելադրանքն է, որ նո՛յն ոգով ու հաւատքով նա մնայ զօրակից ու աջակից Հայաստանի հզօրացմանը նպաստող բոլոր ծրագրերին: Չմոռանանք երբեք, որ Հայաստանի զօրացումը Սփիւռքի զօրացումն է եւ՝ փոխադարձաբար:

Հակառակ այն իրողութեան, որ այսօր, փաստօրէն, իրանահայութիւնն առաւելաբար չորս գլխաւոր քաղաքներում է համախմբւած, սակայն ուրախութեամբ հաստատեցինք, որ Թեհրանի Թեմը չի մոռացել՝ Արաքը, Ղազինը, Ռաշտը, Անգալին, Սարին, Գորգանը, Ղորուղը, Համադանը եւ Քերմանշահը: Սպահանի Թեմը՝ Նոր Զուղան, Շահինշահը, Փերիան, Շիրազը, Ահազը, Աբադանը, Խոռամշահը, Մասջէդ Սոյէյմանը եւ Ատրպատականի Թեմը՝ Թաւրիզը, Ուրմիան, Խոյը, Սալմաստը, Գեարդաբադը, Ռահան, ինչպէս նաեւ սոսկ մի քանի տասնեակ հայ ընտանիքներ ունեցող այլ շրջանները: Իրանահայութիւնը մէ՛կ ամբողջութիւն է՝ հակառակ թեմական երեք շրջաններին: Մէկ ամբողջութեան խոր գիտակցութեամբ ու յանձնառութեամբ պէտք է գործել ու գործակցել: Այստեղ է գաղթօջախի հզօրութեան հիմքը:

Հովւապետական այցելութեան աւարտին մեր պատգամի մէջ ասացինք. «Հայաստանի ծաղկումը, մեր միասնականութեան ամրապնդումն ու ազգային պահանջատիրութեան հզօրացումը պէտք է դառնան առաջնահերթ նպատակ՝ իւրաքանչիւր հայի ու ամբողջ հայութեան համար»: Այդ համազգային հանգանակը իրանահայութեան համար պէտք է դառնայ կեանքի առանցքն ու գործի մղիչ ուժը: Սա է հայ ժողովրդի կեանքի միակ ճանապարհը: Վստահ ենք, որ իրանահայութիւնը վերանորոգ հաւատքով, վճռակամութեամբ ու տեսիլքով շարունակելու է քայլել այս ճանապարհով:

Աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ անվթար պահի ու պահպանի իրանահայութեանը՝ երկնային բարիքներով ծաղկեցնելով նրա կեանքը:

Հայրական ջերմ սիրով

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

28 մայիս 2012
ԱԵԹԻԼԻԱՍ, ԼԻՔԱԳԱՆԳ

Արեւելախայերէցի վերածած
Քաղաւծ «Ալիք» Օրաթերթից

400-ԱՄԵԱՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՆ ԶԵՐՄՕՐԷՆ ՈՂԶՈՒՆԵՅ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի՝ մայիսի 10-ի երեկոյեան, հովապետական այցով Սպահան ժամանեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը, որին ընկերակցում էին՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանը, գաւազանակիր հոգշ. Տ. Մեսրոպ վրդ. Սարգսեանը, Թեհրանի Թեմական Խորհրդի անդամներ՝ Հրաչ Խաչատրեանն ու Ռուբիկ Սարխոջեանը:



Վեհափառ Հայրապետին Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի մուտքի մօտ դիմաւորեցին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Ծափինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Իրանի իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամատուր Ռոբերտ Բեգլարեանը եւ Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները:



Նախ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետըն օրինեց աւանդական աղ ու հացը, այնուհետեւ վաստակատուր ազգայինների միջոցով պահուող ամպհովանիի տակ, Վանքի զանգերի հնչումով, ժողովրդի ծափողջոյններով եւ «Հրաշափառ» շարականի ներքոյ՝ անցաւ պատուի առած սկաուտների շարքերից եւ մուտք գործեց Վանքի Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցի, ուր կատարեց կանոնական աղօթքը:

Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի ուղեկցութեամբ, որի խմբավարն էր՝ Արմէն Ամիրխանեանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը մօտեցաւ Վանքի շրջափակում գտնուող Մեծ Եղեռնի Բիրաւոր Նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանին եւ ծաղկեպսակ տեղադրեց այնտեղ:



Եղեռնի յուշարձանի մօտ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր ողջոյնի խօսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին: Նա իր արտայայտութիւնների ընթացքում նշեց. «Սա մի անկիւնադարձային եւ պատմական դէպք է մեր Թեմի պատմութեան մէջ, որը չպէտք է միայն մի յուշ դառնայ, այլեւ պէտք է դառնայ հոգեւոր ներշնչման առիթ: Ես հաւատում եմ, որ Վեհափառ Հայրապետի այս այցելութիւնն առաւել եւս կը խանդավառի եւ կը զօրացնի մեզ եւ մեր սէրը, մեր երախտագիտութիւնը, մեր խոր հաւատքն առաւել կը զօրացնի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ»:



Այնուհետեւ Սրբազան Հայրը հրաւիրեց Վեհափառ Հայրապետին իր հայրապետական պատգամն ուղղելու ժողովրդին: Վեհափառը Նոր Զուղայի եւ Ս. Ամենափրկչեան Վանքի մասին դուատանքով ար-

տալայտուելով ասաց. «Ս. Ամենափրկչեան Վանքը մեր ժողովրդի համար սովորական աղօթավայր չէ: Մեր ժողովրդի հոգեկան ապրումների, մեր ժողովրդի հոգեմտաւոր սլացքների, մեր ժողովրդի ազգային ձգտումների եւ մեր ժողովրդի մշակութային իրագործումների անսպառ աղբիւր է դարձել Ս. Ամենափրկչեան Վանքը»: Այս Վեհափառ Հայրապետը հայրական օրհնութեամբ ողջոյնի խօսք ուղղելով բոլորին պատգամեց ժողովրդին, որ հաւատարիմ մնան ազգի գերագոյն արժէքներին՝ քրիստոնէական հաւատքին, Հայրենքին, մշակոյթին եւ ազգային պա-

հանջատիրութեանը: Կ.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետն իր խօսքի աւարտին աղօթեց Բարձրեալին, որ Իր երկնային շնորհներով ու բարիքներով առատօրէն լցնի եւ պայծառեցնի մեր ժողովրդի կեանքը եւ յատուկ շնորհակալական խօսք ուղղեց Իրանի Իսլամական Հանրապետութեան հոգեւոր եւ քաղաքական բոլոր ղեկավարներին՝ այս երկրում մեր ժողովրդի ազատութեան եւ բարօրութեան համար:

Վերջում ներկայ հոծ բազմութիւնը խուռներամ շարքեր կազմեց Վանքի Թանգարանի մուտքի մօտ՝ Վեհափառ Հայրապետի աջն առնելու համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ՎԵՏԱՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ՄՊԱՃԱՆԻ ԿԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՏ ՎԵՏԱՓԱՌ ԿԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՎՈՒԹԵԱՐԲ Ս. ԳԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԻՆԵՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Ուրբաթ՝ մայիսի 11-ի երեկոյեան ժամը 4:30-ին, առաջնորդանիստ Ս. Ամենափրկչեան Վանքի Ծաղկեայ Դահլիճում, Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանի, Պատգամաւորական Ժողովի, Թեմական ու Կրօնական խորհուրդների եւ Հաշտեքնիչ Մարմնի անդամների հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգրսեանը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը եւ Թեհրանի Թեմական Խորհրդի անդամ Ռուբիկ Սարխշեանը:

Հանդիպումն սկիզբ առաւ Տէրունական աղօթքով, որից յետոյ Թեմի Պատգամաւորական Ժողովի

Դիւանի ատենապետ Աշոտ Դալթեանը Թեմի օրէնդիր եւ գործադիր մարմինների անունից արտալայտուելով, շնորհակալական խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ հովապետական այցով Սպահանի Հայոց Թեմ ժամանելու կապակցութեամբ: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն իր պատգամն ուղղելով ներկաներին նշեց, որ մեր եկեղեցին կարելիութեամբ շեշտել է ժողովրդի եկեղեցի լինելու իրողութիւնը եւ ատելացրեց. «Մեր պատմութեան ընթացքում, մեր եկեղեցու ազգային նկարագիրը՝ ժողովրդի հետ լինելու, ժողովրդի համար լինելու եւ ժողովրդի հետ միանալու իրողութիւնը, շատ շեշտաւած է»: Վեհափառն իր արտալայտութիւնների մի այլ բաժնում նշելով, որ Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան եւ նրան պատկանող թեմերի կանոնագրութեան մէջ յատուկ շեշտ է դրել ժողովրդի

մասնակցութեան վրայ, կարեւորութեամբ ընդգծեց՝ թեմերի եւ կառույցների կազմակերպածութեան, բարեփոխման եւ առաւել նախանձախնդրութեամբ ու յանձնառութեամբ ժողովրդին ծառայելու հարցերը: Արամ Ա. Կաթողիկոսն իր խօսքի աւարտին գնահատելով վերջին տարիներում Թեմում կատարած աշխատանքները՝ ի մասնաւորի կրօնական դաստիարակութեան եւ ժողովրդին ծառայելու կապակցութեամբ, ասելացրեց. *«Մեր նպատակը պիտի լինի, թէ ինչպէս անել, որ մեր եկեղեցու ծառայութիւնը աւելի ազդու, աւելի շինիչ եւ ժողովրդի կեանքն առաւել կազմակերպող ծառայութիւն լինի»:*

Այնուհետեւ հանդիպման երկրորդ բաժնում Վեհափառ Հայրապետն սպառնիչ պատասխաններ տուց ներկաներին յուզող հարցերին: Իսկ որպէս եզրափակիչ խօսք՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ Հայրապետը պատգամ ուղղեց՝ ազգային գերագոյն արժէքների եւ սրբութիւնների նկատմամբ լինել հաւատարիմ, առաւել հզօրացնել Սփիւքը եւ օրակարգի առաջնահերթ խնդիրներից դարձնել Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը:

Հանդիպման աւարտին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը շնորհակալական խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ իր հայրապետական պատգամի եւ ուղղութիւնների համար:



Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, Ս. Ամենափրկչեան Վանքի Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի, մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ: Օրւայ պատարագիչն էր Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանը: Պատարագին իր երգեցողութեամբ մասնակցում էր Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Յընթացս Ս. Պատարագի, Վեհափառը ներկաներին փոխանցեց իր հայրապետական պատգամը: Նա դրատանքով արտայայտելով Ս. Ամենափրկչեան Վանքի մասին ասելացրեց, որ Ս. Ամենափրկչեան Վանքի տէրը մեր ժողովուրդն է, սակայն նրա պահապանը Սպահանի Հայոց Թեմի զաւակներն են:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսն իր պատգամի մի այլ բաժնում Քրիստոսին հետեւելու իմաստն ամփոփեց հետեւեալ սկզբունքների մէջ՝ սիրել ամբողջ սրտով ու հոգով, հաւատալ՝ Աստծու Որդին՝ Քրիստոսն է մարդու փրկութեան ճանապարհը, եւ պայքարել չարի, չարիքի ու մեղքի դէմ: Այնուհետեւ Վեհափառն իր խօսքն աւարտեց. *«Քրիստոսին հետեւելը մեր պապերի ուխտն է, ուխտը՝ նւիրական: Եւ այսօր մենք որպէս հայեր եւ քրիստոնեաներ, նոյն հաւատարմութեամբ պէտք է հետեւենք Քրիստոսին, որովհետեւ սա է յաւերժութեան ճամբան»:*



Ս. Պատարագից յետոյ, Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպել էր, ընթրիք-երեկոյ Նոր Զուղայի Հայոց Ակումբի բացօթեայ տարածքում: Վեհափառին ընկերակցող պատուիրակութիւնից բացի, ընթրիք-երեկոյին մասնակցում էին Թեմիս ազգային մարմինների, միութիւնների եւ դպրոցների ներկայացուցիչները: Երեկոյի աւարտին Վեհափառ Հայրապետը յղումներ կատարելով Դանիէլ Վարուժանի եւ Պարոյր Սեակի բանաստեղծութիւններին նշեց, թէ Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան առաքելու-



թիւնն է, որ վերանորոգ հաստով եւ առաւել վճռակամութեամբ իր հոգու պարտքը տայ մեր ժողովրդին, ի խնդիր վարդապետի տրամադրութեամբ: Երեկոյի աւարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը գնահատանքի խօսք ուղղելով Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանին՝ նրան շնորհեց եպիսկոպոսական պանակէ, իսկ Թեմի իւրաքանչիւր քահանայ հօրը՝ ձեռագ խաչ:

Թիւնն է, որ վերանորոգ հաստով եւ առաւել վճռակամութեամբ իր հոգու պարտքը տայ մեր ժողովրդին, ի խնդիր վարդապետի տրամադրութեամբ: Երեկոյի աւարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը գնահատանքի խօսք ուղղելով Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանին՝ նրան շնորհեց եպիսկոպոսական պանակէ, իսկ Թեմի իւրաքանչիւր քահանայ հօրը՝ ձեռագ խաչ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ ԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Շաբաթ՝ մայիսի 12-ի առաւօտեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը նախ այցելեց Ա. Ամենափրկչեան Վանքի Թանգարան, որից յետոյ, ներկայ գտնուեց Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրում, ուր անհամբերութեամբ նրան էին սպասում հայոց ազգային դպրոցների պատասխանատուներն ու աշակերտները:

Աշակերտութեան հետ հանդիպումն սկիզբ առաւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցի փոխտեսուչ Արթին Մուրադեանի ողջունի եւ բարիգալստեան խօսքով, որից յետոյ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանը նույնպէս ողջունեց Վեհափառ Հայրապետի ներկայութիւնը եւ հանդէս եկաւ աշակերտութեան ուսման իրավիճակից հակիրճ զեկոյցով:

Այնուհետեւ որպէս աշակերտական ելոյթների սկիզբ, աշակերտական խօսքն ընթերցեց «Քանանեան» աղջ. դպրոցի աշակերտուհի Մելի Դուկասեանը, որից յետոյ Հայոց Ազգային Մանկապարտէզ-Նախակրթարան, «Արմէն» երկսեռ տարրական, «Կատարինեան» տղայոց եւ «Քանանեան» աղջ. ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտութիւնն առաձնաբար ելոյթ ունեցաւ երգերով: Աշակերտական ելոյթից յետոյ՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին հրաւիրեց՝ իր հայրապետական պատգամը փոխանցելու:

Վեհափառ Հայրապետը հայ դպրոցն իր ինքնու-



թեամբ, առաքելութեամբ եւ նպատակով տարբեր համարելով ասելացրեց. «Մեր ժողովրդի համար՝ հայ դպրոցը փոքր Հայաստան է: Հայաստանից դուրս, Հայաստանից հեռու, հայ դպրոցի ճամբով մենք շնչում ենք հայրենի հողը, հայրենի երգը եւ հայրենի ջուրը ու լցում ենք հայրենիքի կարօտով եւ երազով: Հայ դպրոցը մեր ժողովրդի պահանջատիրական պայքարի միջնաբերդն է»:

թեան Միութեան անդամուհիները: Ծրագրում ծերանոցի երկու տարեց բնակիչներ եւ Կանանց Գթութեան Միութեան անդամուհիներից մէկը ելոյթ ունեցան ասմունքներով ու երգերով, որից յետոյ բարիգալստեան խօսքով ու հակիրճ զեկոյցով հանդէս եկաւ Միութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն իր հայրապետական պատգամն ուղղելով ներկաներին՝ գնահատանքի խօսք ասաց՝ ծերանոցի յարկի տակ կատարող նիրական աշխատանքի համար եւ կարեւորութեամբ շեշտեց. «Բոլոր ազգային իշխանութիւնները, առաջնորդները եւ թեմական կառույցները ոչ թէ ձեւականօրէն այլ գործնական կերպով իրենց հոգածութիւնն ու գուրգուրանքն են արտայայտում հայ ծերանոցների նկատմամբ: Այստեղ կատարւող աշխատանքը միայն մարդասիրական աշխատանք չէ, այլ ազգային աշխատանք է»: Վեհափառ Հայրապետն իր խօսքի ասարտին նույնպէս գնահատանքի խօսք ասաց Թեմակալ Առաջնորդին եւ Թեմական Խորհրդին՝ ծերանոցի նկատմամբ յատուկ ուշադրութիւն ցուցաբերելու համար:

Վերջում ներկաները լուսանկարեցին Վեհափառ



Վեհափառն իր պատգամի ասարտին գնահատանքի խօսք ուղղելով Թեմի Կրթական Խորհրդին, դպրոցների տնօրէններին եւ ուսուցչական կազմերին, դիմելով աշակերտներին, ասաց հաւատարիմ լինել հայ դպրոցին եւ մասնակից դառնալ հայ դպրոցի նիրական առաքելութեանը:

Աշակերտական հանդիպումն ասարտեց հիւրասիրութեամբ, որից յետոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը եւ իրեն ընկերակցող շքախումբն այցելեց Նոր Զուղայի Հայոց Ազգային Ծերանոց:

Սկզբում Վեհափառ Հայրապետը շրջելով ծերանոցի տարածքում մօտիկից ծանօթացաւ ծերանոցի հնարարութիւններին: Այնուհետեւ նա մուտք գործեց ծերանոցի սրահ, որտեղ անհամբերութեամբ իրեն էին սպասում տարեց բնակիչներն ու սոյն կենտրոնը կառավարող Նոր Զուղայի Հայ Կանանց Գթու-

Հայրապետի հետ:



Նոյն օրը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետն այցելեց Նոր Զուղայի Ս.

Ա. Վանքի Ա. Յովսէփ Արեմաթացի եկեղեցին, Թանգարանը, Ս. Բեթղեհէմ, Ս. Աստուածածին, Ս. Յակոբ, Ս. Գէորգ եւ Ս. Ստեփանոս եկեղեցիները:



Վեհափառ Հայարապետն երեկոյեան ժամը 7-ին, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում, հանդիպում ունեցաւ Թեմիս երիտասարդութեան հետ:



Հանդիպումն սկիզբ առաւ երիտասարդական խօսքով՝ Սելին Ղարիբեանի ընթերցմամբ, որից յետոյ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանն իրազեկելով Թեմիս երիտասարդական կառույցների մասին, Վեհափառ Հայրապետին հրաւիրեց՝ իր հայրապետական պատգամը փոխանցելու:

Արամ Կաթողիկոսն արտայայտելով, որ իր հովապետական այցելութիւնների ընթացքում յատուկ կարեւորութիւն է տալիս երիտասարդութեան հետ հանդիպումներին աւելացրեց, որ երիտասարդութիւնը մեր եկեղեցու, ազգի եւ հասարակութեան ամենակենսական եւ գործօն տարերից է: Նա իր խօսքի շարունակութեան մէջ անդրադառնալով, որ այսօրուայ երիտասարդութիւնը տագնապի մէջ է գտնուում, որին մղում է ինքնաարտայայտման զանազան ձեւերի, թարկեց հետեւեալ երեք տագնապները՝ ինքնութեան, իրենց սահմանափակող շրջագծերից եւ կադապարած մտածումներից դուրս գալու ցանկութեան եւ մասնակցութեան հարցերը: Այնուհետեւ նշելով, որ համաշխարհայնացումն ունի իր իւրապատուկ ինքնութիւնը եւ արժեշափերը, կարեւորութեամբ ընդգծեց՝ քաջալերել երիտասարդութեան մասնակցութիւնը մեր կեանքին, նոր մտածողութեամբ կենսունակութիւն մտցնել մեր կառույցներում եւ մեր արժէքներն ու ասանդութիւնները բանալ օտարների առջեւ՝ երիտասարդների միջոցով:

Հանդիպումն ընթացաւ հարց ու պատասխանի ձեւով, եւ բոլոր հարցերին սպառիչ պատասխաններ տւեց Արամ Ա Կաթողիկոսը: Վերջում ներկաները լուսանկարուեցին:



Մ.Է.Ա.Ի.Ի. շժՅ ը ի օճՅ օժ Ե ՃՅ ՍժՅ օժ Ի Բ
Ճաժ օժ օժ ը ի ը Ի ը Ս ը Ս օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե
ՃՅ Ս ը օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե
Ի ը ՃՅ Ս ը օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե օժ Ե


րին բացատրեց ձեռնարկի պատգամը՝ հայ գրքին ու տպագրութեանը ներած լինելը:



Շաբաթ՝ մայիսի 12-ի երեկոյեան ժամը 8:30-ին, Նոր Զուղայի «Արարատ» Միութեան սրահում, հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի հովնապետական այցելութեան առթիւ տեղի ունեցաւ գեղարւեստական երեկո՝ ներած հայ գրատպութեան 500-ամեակին եւ Հայ Գրքի Տարւան:

Այնուհետեւ որպէս գեղարւեստական կատարումների սկիզբ՝ «Արարատ» Միութեան «Կոունկ» ասմունքի խմբի անդամ Լեռնիկ Ծատուրեանը ասմունքեց Զարեանցի «Տաղ ձօնած գրքերին» բանաստեղծութիւնը: Քիչ անց բեմը տրամադրեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբին, որը հանդէս եկաւ «Նոյեան Աղանին», «Էլէգիա», «Աղբիւր եմ» եւ «Blue Danube Waltz»-ից մի հատուածի կատարումներով:

Նախ «Արարատ» Միութեան շրջափակում ներկայ բազմութիւնն իր բուն ծափողջոյններով ջերմօրէն դիմաւորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետին: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն անցնելով պատի առած սկաւտների շարքերից մուտք գործեց «Արարատ» Միութեան սրահ, որտեղ իրագործեց օրւայ առթիւ նախատեսուած գեղարւեստական ծրագիրը:



Երեկոյին ներկայ էին Թեհրանի եւ Սպահանի Հայոց թեմերի առաջնորդներ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանն ու գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահիի հայ համայնքի հոգեւոր հովի հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունունեանը, գաւազանակիր հոգշ. Տ. Մեսրոպ վրդ. Սարգսեանը, քահանայից դասը, Թեհրանի եւ Սպահանի Հայոց թեմերի ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հոծ թուով ժողովուրդ:

Ծրագրի շարունակութեան մէջ «Կոունկ» ասմունքի խմբի անդամներ՝ Ալինա Տէր-Սուքիասեանն ասմունքեց Վ. Դաւթեանի «Ռեքլիեմ»-ից, իսկ Մանիա Ղուկասեանը՝ Պ. Սեւակի «Եռաձայն Պատարագ»-ից հատուածներ: Երգերի կատարմամբ ելոյթ ու-

նեցան Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մեներգչուհիները: Նախ՝ Սուէ Ասատրեանը կատարեց «Կանչէ Կոունկ» երգը, ապա՝ զուգերգով հանդէս եկան Վանա Թիրանեանն ու Թանհա Մինասեանը՝ «Մենք ենք ու սարերը մեր» երգի կատարմամբ:



Գեղարեստական բաժինն աւարտեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի ելոյթով: Խումբը կատարեց «Կիլիկիա», «Ազգային օրհներգ», «Հայաստան», «Մուսա լառան կարօտը» եւ «Պօէմ երգի մասին» երգերը:



Այսպիսով գողտրիկ, անզուգական եւ իւրօրինակ գեղարեստական կատարումներով՝ Նոր Զուղայի արեստից մի փունջ մատուցեց ներկաներին, որը խանդավառութեան առաւել բարձրացման աւիթ հանդիսացաւ: Յատկանշական է, որ «Արարատ» միութեան «Կոունկ» ասմունքի խմբի ղեկավարն էր Ռիմա Սիմոնեանը, Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երիտասարդական ու երէցների երգչախմբերի խմբավարն էր Արմէն Ամիրխանեանը, իսկ Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթև» երգչախմբումը խմբավարում էր Համիկ Ալեքսանդրեանը:

Ծրագրի երկրորդ բաժնում օրւան պատշաճ խօսքերով ելոյթ ունեցաւ Սպահանի հայոց Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանն ու թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, իսկ ներկաներին իր հայրապետական պատգամը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը:

Նոէլ Մինասեանն ազգային իշխանութեան անունից շնորհակալութիւն յայտնելով Վեհափառ Հայրապետին՝ Սպահանի Հայոց Թեմ

կատարած իր հովւապետական այցելութեան համար, ասաց. *«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը ոչ միայն մեր հոգեւոր ղեկավար կենտրոնն է, այլեւ մեր ժողովրդին մտահոգող բոլոր ասպարէզների եւ ուղղութիւնների ղեկավար կենտրոնն է: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը, մեր ժողովրդի մերօրեայ կեանքի մէջ իր ղեկավար հանգամանքով, կարեւոր նշանակութիւն եւ դերակատարութիւն ունի»:*



Թեմական Խորհրդի ատենապետըն անդրադառնալով «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ»-ի եւ Հայ Դատի ու հայ ժողովրդի արդար իրաւունքների պահանջատիրութեան առնչութեամբ Վեհափառ Հայրապետի ծաւալած դրական եւ ազդեցիկ գործունէութեանը, անււացրեց. *«Մեր համայնքն իր կազմակերպման եւ հիմնադրման առաջին օրւանից փոքրաթիւ է եղել, սակայն այդ հանգամանքն երբեք պատճառ չի դարձել, որ մեր ժողովրդի հոգեւոր եւ քաղաքական աշխատանքների ուղղութեամբ իր ինքնուրոյն դերակատարութիւնը չունենայ: Մեր համայնքը մեծ ներդրում է ունեցել անցեալում եւ վստահ ենք որ դեռ անելիքներ ունի»:*

Նոէլ Մինասեանն իր խօսքի աւարտին հետաքրքիր զուգադիպում համարելով Վեհափառ Հայրապետի այ-

ցը Սպահան եւ Շուշիի ազատագրման 20-ամեակը ասաց, որ այս զուգահիսուսը մեր համայնքին նոր շունչ եւ ոգի է հաղորդելու՝ ազգային եւ կրօնական աշխատանքների իրագործման մէջ:



Այնուհետեւ ներկաներին իր պատգամը փոխանցեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը: Գերշ. Սրբազան Հայրը, ողջունելով Վեհափառ Հայրապետի հովուապետական այցը, ատելացրեց. «Այսօր մեր համայնքում տօնական մթնոլորտ է տիրում: Մենք բոլորս ուրախ ենք եւ հպարտ, որ Վեհափառ Հայրն իր ժամանակը տրամադրել եւ եկել է մեզ այցելութեան, որով ցանկանում է աւելի մօտիկից ճանաչել մեր համայնքները եւ մեր Թեմի աշխատանքները»:



Գերշ. Սրբազան Հայրը մի շարք տեղեկություններ փոխանցելով «Եկեղեցիների Համաշխարհային Խոհրուդ»-ում Վեհափառ Հօր ունեցած դերակատարութիւնից եւ Հայ Դատի առնչութեամբ կատարած դրական աշխատանքներից, ատելացրեց. «Քաջ եւ արթուն է մեր Հովակատը, որովհետեւ իր քաջ կեցածքով միշտ մեր ժողովրդի շահերն է պաշտպանել, մեր եկեղեցու շահերն է պաշտպանել՝

մեր ժողովրդի ընդհանրական շահերը: Այս է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռի առաւելութիւնը եւ մանաւանդ մեր Վեհափառ Հայրապետի առաւելութիւնը»:

Միջոցառման ավարտին Ն.Ա.Օ.Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ուղղեց ժողովրդին: Վեհափառ Հայրապետն անդրադառնալով հայ մշակոյթի դերակատարութեանը հայ ժողովրդի գոյատեւման եւ ինքնագարգացման գործում, մատնանշեց. «Մշակոյթը իւրաքանչիւր ժողովրդի ինքնաճանաչման ու ինքնարտայայտման ամենից հարագատ կերպն է: Կարելի չէ կրօնը երեւակայել այս աշխարհի վրայ առանց մշակոյթի: Մշակոյթի ճամբով է, որ երկիրը յարաբերութեան մէջ է մտնում երկնքի հետ: Մշակոյթի ճամբով է, որ ժողովուրդը արտայայտում է ինքն իրեն, իր ինքնութիւնը, իր ինքնաճանաչողութիւնը»: Վեհափառ Հայրապետն իր խօսքի մի այլ բաժնում նշելով հայ մշակոյթի ճակատագրական դերը հայ ժողովրդի բովանդակ պատմութեան ընթացքում, ասաց. «Հայ մշակոյթը հայ մտքի սլացքն է: Հայ մշակոյթը հայ սրտի տրոփն է, այսպէս է եղել հայ մշակոյթը եւ այսպէս պէտք է մնայ: Առանց մշակոյթի մեր ժողովուրդը պիտի կորցնի իր գոյնը, իր նկարագիրը, իր ինքնութիւնը եւ ինքն իրեն»:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը դուատանքով արտայայտելով Նոր Զուղայի մասին, ատելացրեց. «Նոր Զուղան անցեալ չէ, Նոր Զուղան ներկայ է ու նաեւ պայծառ ապագայ: Նոր Զուղան որակ է ո՛չ քանակ, եւ ես հաւատացած եմ որակին, որովհետեւ որակը արժէք է, որակն է ճառագայթողը, որակն է մշակոյթը, որակն է մնայունը, իսկ քանակը ժամանակաւոր է, խափուսիկ է եւ մակերեսային»:

Վերջում Վեհափառ Հայրապետը շրջելով «Արարատ» Միութեան շրջափակում՝ մօտիկից ականատեսը եղաւ նորակառոյց մարզասրահի եւ մի շարք այլ աշխատանքների:

ԱՐԱՄ Ա ՎԱՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԾԱՀԻՆՃԱՐ



Ուրբաթ՝ մայիսի 11-ի առաւօտեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը հովապետական այցով ժամանեց Ծափինշահր:

Վեհափառ Հայրապետի դիմաւորութեան եւ ընդունելութեան համար կեանքի էր կոչել յանձնախումբ, ըստ հետեւեալի. արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեան՝ ատենապետ, տկն. Արմինէ Իսախանեան՝ փոխ-ատենապետ, օրդ. Էդնա Խաչիկեան՝ ատենադպիր, պրն. Էդին Բարումեան՝ գանձապահ, տկն. Վարդուհի Պօղոսեան՝ Վարչութեան կապ, տկնք. Անահիտ Օհանեան, Սքառլեթ Թահմազեան եւ Մատիթա Սարեան՝ խորհրդատու անդամներ, ովքեր ջանք ու եռանդ չխնայեցին իրենց վստահած պարտականութեան մէջ:

Ծափինշահրի հայ համայնքը սրտի տրոփիւնով եւ անհամբեր սպասում էր Վեհափառի ժամանմանը: Վեհափառ Հայրապետի դպրոցի բակ մտնելիս կատարեց գառազենում, որից յետոյ դիմաւորում կատարեց ասանդակաւ աղ ու հացով: Մինչեւ եկեղեցի տանող ճամբի երկու կողմերով սկաւտներն ինչպէս նաեւ դպրոցի աշակերտութիւնն իրենց ձեռքի ծաղիկները փռելով գետին, զարդարեցին Վեհափառի ճանապարհը: Վեհափառ Հայրապետը Ծափինշահրի հայ համայնքի ներկայութեամբ կատարեց կանոնական աղօթք, որից յետոյ ուղղորդեց բակ՝ դիտելու գեղարեստական ծրագիրը:

Ծրագրի սկզբում բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Նա իր խօսքում նշեց. «Վեհափառն այսօր իր ներկայութեամբ եւ հայրապետական օրհնանքով վերանորոգելու է մեր ուխտը եւ հաւատը: Ծափինշահրի հայ համայնքն իր ներկայութեամբ այսօր մէկ անգամ եւս վստահեցնում է, որ սերտօրէն կապած է մեր եկեղեցուն եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կա-

Թողկոսութեանը»:

Այնուհետեւ բեմ ելաւ «Սրբոց Վարդանանց» դպրոցի պարախումբը, կատարելով գեղեցիկ եւ տպաւորիչ պար, ղեկավարութեամբ պարուսոյց Ալինա Գրիգորեանի, իսկ «Նարոս» երգչախումբն իր երգացանկից կատարեց մի ծաղկաքաղ, ինչպէս նաեւ «Մաղթերգ Հայրապետական»-ը:



Գեղարեստական ծրագրի աւարտին Վեհափառ Հայրապետը փոխանցեց իր հայրական պատգամը, որտեղ կոչ արեց միասնականութեան՝ նշելով. «Մեր ժողովրդի գաւազները, երբ միասին լինեն, մեր միասնութիւնը կամրապնդի մեր ազգային ինքնութիւնը, մեր միասնական հոգին կը դառնայ մեր ժողովրդի հզօրութեան աղբիւր: Հայ լինելը դիւրին չէ, յատկապէս սփիւռքի դժար պայմաններում այն ամենօրեայ պայքար է, ամենօրեայ ապրուստ, ամենօրեայ տազնապ՝ ի խնդիր մեր ժողովրդի դարաւոր

երազները իրականացման: Վստահեցնում եմ ձեզ, որ մեր եկեղեցին եւ մանաւանդ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ՝ կեանքի թէ՛ ուրախ եւ թէ՛ դժար պահերին, իր ժողովրդի հետ է»:

Արամ Ա Կաթողիկոսը շարունակեց իր խօսքը ասելով. «Ես ուրախութեամբ վկայում եմ, որ մեր շրջանների հայ համայնքներն ունեն շխտոյթ եւ կենսունակ կեանք եւ տեղեկացայ նաեւ, որ Շահինշահի համար մեծ ծրագրեր կան իրագործելու, այդ թւում եկեղեցու կառուցումը, որոնց նպատակն է մեր ժողովրդի առաւել ամրապնդումը եւ հոգեւոր, մշակութային եւ ազգային արժէքների պահպանումը: Այս անցեալ տարւայ ընթացքում դուք ունեցաք հոգեւոր հովիւ՝ Տ. Անանիա վրդ. Գուճանեանին եւ ուրախ եմ, որ նա զնահատուում է ձեր կողմից: Ամենակարեւոր եւ ամենախիստ քննիչը ժողովուրդն է, եւ ես միանալով ձեր զնահատանքին ուզում եմ որպէս իմ սիրոյ եւ զնահատանքի արտայայտութիւն՝ Հայր Սուրբին նւիրել մի խաչ»:



Խաչը Հայր Սուրբին յանձնելով, Վեհափառ Հայրապետն ատելացրեց. «Խաչը մեզ համար փառքի եւ պատւի նշան է, այլ հրաւէր է առաւել ծառայութեան եւ առաւել նւիրումի: Եւ ես վստահ եմ, որ հետեւելով Առաջնորդ Սրբազանի խորհուրդներին եւ համագործակցելով նրա հետ, Հայր Սուրբը վերանորոգ նւիրումով պիտի շարունակի ծառայել ձեզ՝ բոլորին»:

Տ. Անանիա վրդ. Գուճանեանը Համայնքային Վարչութեան եւ համայնքի անուցից Վեհափառ Հայրապետին նւիրեց գեղեցիկ գաւազան, մաղթելով. «Վեհափառի գաւազանը միշտ ծաղկեալ մնայ եւ միշտ առաջնորդի մեզ իր հովապետական գաւազանով»:

Վերջում ժողովուրդը հրաւիրեց սրախ՝ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը՝ հոգեպարար աջհամբոյրով:

ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԴԱՐՏԵՅ ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Կիրակի՝ մայիսի 13-ի առաւօտեան Նոր Զուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, նախագահութեամբ Արամ Ա Վեհափառ Հայրապետի, մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ: Օրւայ պատարագիչն էր հոգ. Տ. Մեսրոպ վրդ. Սարգսեանը: Երգեցողութեամբ Պատարագին մասնակցել էր Ս.Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:



Յընթացս Ս. պատարագի, Արամ Ա Կաթողիկոսը ներկաներին փոխանցեց իր հայրապետական պատգամը եւ վկայելով, որ Նոր Զուղայի ժողովուրդը լաւ կազմակերպւել է եւ համախմբւել է իր եկեղեցու եւ համայնքային կազմակերպութիւնների շուրջ, բարձր գնահատեց թեմակալ առաջնորդի, ազգային իշխանութեան եւ կազմակերպութիւնների կատարած ծառայութիւնները այդ ուղղութեամբ: Վեհափառ Հայրապետն իր պատգամի մէջ անդրադառնալով քրիստոնէական կեանքի ճշմարիտ իմաստին, ատելացրեց. «Մեր կեանքի կենտրոնը պէտք է լինի Աստուծո: Աստուծոց հռու, մարդու կեանքը կը կորցնի իր ճշմարիտ իմաստը: Կեանքը Աստուծու պարգեւն է մեզ, եւ մենք պէտք է այնպէս ապրենք, որ ճառագայթեն աստուծային ներկայութիւնը, Քրիստոսի ուսուցումները, Աւետարանի ճշմարտութիւնները եւ աստուծային արժէքներն ու սկզբունքները»:

Վէսօրից յետոյ ժամը 2:30-ին, ասարտելով Սպահանի Հայոց Թեմ կատարած իր հովապետական այցը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետն իրեն ընկերակցող պատիրակութեան հետ վերադարձաւ Թեհրան: Պատիրակութեանն ուղեկցում էր նաեւ Թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բարբէն եպս. Չարեանը:

Ս. Ամենափրկչեան Վանքում, Վեհափառ Հայրապետին բարի երթ մաղթեցին Ծափնշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայ հայրերը եւ Թեմիս ազգային մարմինների ներկայացուցիչները:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 9-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ



Մայիսի 27-ի առաւօտեան տեղի ունեցաւ Իրանի Իսլ. Խորհրդարանի 9-րդ գումարման անդրանիկ նիստը: Միջոցառումն ընթացաւ ըստ օրակարգի, որտեղ երեք՝ Օրէնսդիր, Գործադիր եւ Դատական մարմինների նախագահներից բացի, ներկայ էին պետական այլ բարձրաստիճան հիւրեր:

Իրանահայ նորընտիր պատգամաւորներ դուրս եկան Կարէն Խանլարեանի եւ պրն. Ռոբերտ Բեգլարեանի կողքին, բացման հանդիսութեանը ներկայ էին՝ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգսեանը, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը եւ Ատրպատականի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթնեանը:

Արարողութեանը ներկայ էին նաեւ Իրանում հաւատարմագրած դեսպանները:

Արարողութեան սկզբում 9-րդ գումարման խորհրդարանի առժամեայ (տարիքային) նախագահ դուրս եկան Մարանդին հանդէս եկաւ ելոյթով, որից յետոյ Իսլ. Յեղափոխութեան առաջնորդի աշխատակազմի ղեկավար այաթ. Գոլփայգանին ընթերցեց Իսլ. Յեղափոխութեան առաջնորդի պատգամը, որին յաջորդեց ժողովրդի ընտրեալների երդման արարողութիւնը:

Ապա ելոյթ ունեցան՝ ներքին գործոց նախարար Նաջջարը եւ նախագահ Ահմադինեժադը:

Մեկնարկման հանդիսութեան աւարտին պատգամաւորները մեկնեցին Իսլամական Հանրապետութեան հիմնադիր Էմամ Խոմէյնիի դամբարան՝ յարգանքի տուրք մատուցելու յեղափոխութեան արժէքների նկատմամբ:

Ս. ՀՈՒՓՍԻՄԵՆԸՆՅ ԵՒ Ս. ԳԱՅԻԱՆԵԱՆՅ ԿՈՒՍԱՆԸՆ ՈՒ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԿԱՏԱՐԻՆԵՆՅ ՎԱՆՔԻ ԼՆԻՆՆԱԿՈՉՈՒԹԵՆՆ ՏՕՆ

թեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի:



Եկեղեցական տօները պատեն առիթ են հանդիսանում՝ քրիստոնէական հաւատը վերարմատաւորելու, առաւել ամրապնդելու եւ խորհուրդներ կատարելու համար: Այդ տօների շարանում է գտնուում Ս. Հոփսիմեանց եւ Ս. Գայիանեանց կուսանաց տօնը, որի առթիւ եւ նույնաճան եկեղեցու անանակոչութեան տօնի նշման համար, Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց յունիսի 4-ի առաւօտեան Նոր Զուղայի Ս. Կատարինեան Կուսանաց Վանքի եկեղեցում, նախագահու-

Պատարագը մատուցեց արժն. Տ. Վազգէն քննչ. Քէօշկերեանի ձեռամբ, իսկ երգեցողութեամբ հանդէս

եկա Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի: Արարողութեանը ներկայ էին նաեւ հոգեւորականց դասը եւ հոծ թուով հաւատացեալներ:

Պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց առաջնորդ Սրբազան Հայրը: Նա սկզբում մէջքերում կատարելով Քրիստոսի պատգամներից, այսպէս արտայայտեց. «Քրիստոսն ասել է՝ մի՛ վախենաք նրանցից, ովքեր կը սպանեն ձեր մարմինները, այլ վախեցէ՛ք նրանցից, ովքեր ձեր մարմինները եւ հոգիները կը սպանեն: Երբեք մի՛ վախենաք ճշմարտութիւնն ասելուց»: Այնուհետեւ թեմակալ առաջնորդն օրայ խորհուրդը բացատրելով հաւատացեալներին, անլացրեց. «Այսօր տօնն է նաեւ Ս. Կատարինեան Կուսանաց Վանքի, որտեղ ապրել են կոյսեր՝ Ս. Գայիանեանց եւ Ս. Հռիփսիմեանց կոյսերի ոգով, գիտակցութեամբ ու հաւատով: Նրանք այդ ոգին դրսեւորել են իրենց բարեգործական, խնամատարական եւ կրթական աշխատանքներով»: Սրբազան Հայրը քարոզի շարունակութեան մէջ անդրադառնալով Ս. Կատարինեան Կուսանաց Վանքում աշխատող 120-ամեայ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հիմնադրման նպատակների՝ հայրենիքին, դպրոցներին ու համայնքին օժանդակելուն, իր խօսքն այսպէս աւարտեց. «Միրելիներ, եկէ՛ք օրինակ վերցնելով մեր սրբերի կեանքից, քրիստոնէական ճշմարիտ հաւատով ապրենք, ստեղծագործենք ու պայքարենք, եւ այդ ժամանակ կարող ենք քաջաբար եւ առանց վախենալու դաւանել, որ Քրիստոսի իսկական հետեւորդներն ենք եւ Քրիստոսն եւս իր Հօր առջեւ կը դաւանի մեզ եւ երկնքի արքայութեանը կարժանացնի»:

Ս. Պատարագի աւարտին Սրբազան Հայրը հոգեւորականց դասի հետ կատարեց Զրօրհնէքի արարողութիւն՝ Ս. Կատարինէ կոյսի աջով օրհնելով ջուրը:

Յետ Պատարագի, թեմակալ առաջնորդի նախագահութեամբ Հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ Կուսանաց Վանքի կոյսերի եւ Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հիմնադիրների ու մնչեցեալների վառ յիշատակին, որի աւարտին բազմութիւնը խնկարկեց նրանց հոգու խաղաղութեան համար՝ իր հետ տանելով օրհնած ջրից:

Յատկանշական է, որ Բարեգործական Ընկերութեան հիմնադիրների եւ մնչեցեալների յիշատակին Հոգեհանգստեան արարողութիւնը կազմակերպել էր սույն Ընկերութեան 120-ամեակի յրբելեանական յանձնախմբի նախաձեռնութեամբ:

Այնուհետեւ Ս. Կատարինեան Կուսանաց Վանքի բակում, Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան հաւաքատեղիին կից, բացօթեայ տարածքում, տեղի ունեցաւ ընդունելութիւն, որտեղ արտայայտութեամբ ելոյթ ունեցան Ընկերութեան Վարչութեան նախագահ Սանդրա Խաչատրեանն ու արժն. Տ. Վազգէն քնն. Քէօշկերեանը, իսկ ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը: Ընթացքում հայրենասիրական երգով հանդէս եկաւ Արաքս Տէր-Մարտիրոսեանը:

Նախագահ Սանդրա Խաչատրեանն Ընկերութեան Վարչութեան անունից ողջունի խօսք ուղղեց բոլորին եւ անդրադառնալով Միութեան հիմնադրմանը, որը տեղի է ունեցել 1892 թականին բարերար Յովսէփ Բարսեղեանի միջոցով, անլացրեց. «Բարեգործական Ընկերութիւնը լինելով համայնքի ամենավաստակաւոր Միութիւնը՝ հպարտ է, որ այսօր երկար տարիներ ծառայել է ժողովրդին եւ գոյատեւել ու գոյատեւելու է յանուն իր նպատակների: Ընկերութիւնն իր 120-ամեակի սեմին չմոռանալով իրենից առյաւէտ բաժանած բարերարներին ու անդամներին՝ Հոգեհանգստեան արա-

րողութեամբ իր յարգանքի նւագագոյն տուրքը մատուցեց նրանց յիշատակին»:



Այնուհետեւ Տ. Վազգէն քնն. Քէօշկերեանն անդրադառնալով Հռիփսիմեանց եւ Գայիանեանց կոյսերին, ասաց. «Նրանք թէեւ ազգութեամբ հայ չէին, բայց հայ եկեղեցու եւ հայ ժողովրդի համար դարձան ջահեր եւ խունկ միացող բուրվառներ»:

Քահանայ Հայրն իր խօսքի աւարտին շնորհակալական խօսք ուղղեց Սրբազան Հօրը՝ իր գեղեցիկ քարոզի եւ Բարեգործական Ընկերութեանը՝ բարերարների յիշատակին Հոգեհանգստեան արարողութիւն կազմակերպելու համար:

Որպէս եզրափակիչ խօսք՝ թեմակալ առաջնորդն իր հայրական պատգամում ասաց. «Այս եկեղեցին կառուցել է մեր ժողովրդի հաւատի հիմքի վրայ եւ այդ հաւատն է, որ այսօր կայ, ապրեցնում է եւ տալիս է գոյատեւելու ուժը: Եկեղեցին իմաստ չի ունենայ եթէ որպէս շէնք դիտուի: Եկեղեցին կեանք կը ստանայ եւ կը պայծառանայ իր հաւատացեալների աղօթքներով ու մասնակցութեամբ»:

Սրբազան Հայրն իր խօսքն աւարտեց գնահատելով ժողովրդի մասնակցութիւնը եւ Բարեգործական Ընկերութեանը՝ յրբելեանական գեղեցիկ միջոցառումներ կազմակերպելու համար:

ՆԵՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 94-ԱՄՏԵԱԿԵ ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ



Հինգշաբթի, մայիսի 31-ի երեկոյան ժամը 8-ին, Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան շրջափակում, նախաձեռնութեամբ Հ.Հ. Հիմնադրման 94-ամեակի տօնակատարութեան Նոր Զուղայի յանձնախմբի, մեծ շուքով նշեց Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 94-ամեակը: Միջոցառմանը ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինջահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, քահանայից դասը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հիւսիսային եւ հարաւային իրանահայութեան պատգամաւորներ՝ դոկտ. Կարէն Խանլարեանն ու պրն. Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների, Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները եւ հոծ թուով հայրորդիներ:

Ծրագրի պաշտօնական բացումը կատարեց Հանրապետական մադթանքով, որը տեղի ունեցաւ նախագահութեամբ թեմակալ առաջնորդ Սրբազան Հօր, մասնակցութեամբ հոգեւորականց դասի եւ երգեցողութեամբ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի՝ Արմէն Ամիրխանեանի խմբավարութեամբ: Սոյն բաժինն ասարտեց դրօշակի արարողութեամբ, որն օրհնելուց յետոյ ծածանեց Արամ Մանուկեանի պատկերի մօտ:

«...Եւ քանզի կար գաղափարը, գտնւեց նաեւ այդ գաղափարի առա-

ջամարտիկը՝ Արամ Մանուկեանը, որն իր վրայ վերցրեց պատմական այդ առաքելութիւնը՝ առաջնորդելով ժողովրդին դէպի վճռական ճակատամարտ, եւ դրա յաղթական աւարտից յետոյ՝ աւետելով բազմաթիւ սերունդների երազանքի իրականացումը՝ Ազատ ու Անկախ Հայաստանի ստեղծումը»: Օրւայ հանդիսավարներ Մանիա Ղուկասեանի եւ Արթին Մուրադեանի ողջոյնի խօսքերով եւ օրւան պատշաճ լուզուցներով սկսեց ծրագրի երկրորդ բաժինը:



Այնուհետեւ Հ.Հ. Հիմնադրութեան 94-ամեակի տօնակատարութեան Նոր Զուղայի յանձնախմբի անդամ Արտեմիս Խաչեանն ընթերցեց սոյն յանձնախմբի խօսքը, որում կարեւորութեամբ ասուած էր. *«Մայիս 28-ով նւաճածը, Հայաստանի անկախութեան եւ Հայաստանի Հանրապետութեան ամբողջական վերականգնումն է ռազմավարական այն ուղին, որ գալիք սերունդներին հնարաւորութիւն պիտի տայ նւիրելու հայոց պետականութեան հզօրացման սրբազան պայքարին»:*

Յանձնախմբի խօսքին յաջորդեց շքերթ-տողանցքը: Եթերթին մասնակցում էին՝ Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների եւ Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները, երգչախմբերի եւ միութիւնների վարչութիւնները, հայոց ազգային դպրոցների անձնակազմը, Ծնողական խորհուրդներն ու աշակերտութիւնը, «Թ. Թաղէոսեան» Պատանեկան Միութեան Վարչութիւնը, «Ռուբէն» Երիտասարդական Միութեան անդամ-ուհիները, 94-

ամենակի տօնակատարութեան յանձնախումբն ու Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Սկսուսական Միաւորը՝ իրենց յարգանքի տուրքը մատուցելով մայիսեան սիրագործութեան հերոսներին:



Ծբերթին յաջորդեց Իրանի Իսլ. Հանրապետութեան Խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր դոկտ. Կարէն Խանլարեանի բանախօսութիւնը: Յարգելի բանախօսն անդրադառնալով մայիս 28-ի խորհրդին ասաց. «Եթէ չլինէր Մայիս 28-ը, ապա այսօր չէինք ունենայ Ազատ ու Անկախ Հայաստանը: Սխալ է այն տպաւորութիւնը, որ կարծենք՝ Մայիս 28-ը մի մեծ հայկական բանակի յաղթական արշաւանքն էր: Մայիս 28-ի արժէքն աւելի բարձր է պատմութեան մէջ յաճախ կրկնուող յաղթանակներից: Մայիս 28-ն իրականացւեց այն ժամանակ երբ հայ ժողովուրդն ենթարկւել եւ դեռ չարունակուեց էր ենթարկւել ցեղասպանութեան: Մայիս 28-ը գոյամարտ էր եւ ոչ թէ հերոսամարտ»:

Դոկտ. Խանլարեանն անդրադառնալով Արամ Մանուկեանի անզուգական գործունէութեանը, Հայաստանի Առաջին Հանրապետութեան հռչակումից յետոյ Հայաստանում տիրող կացութեանը եւ կատարւած աշխատանքներին ու ձեռք բերւած նաճումներին՝ անելացրեց. «Մեզ մնում է միայն, որ այս ամբողջ խորհուրդը եւ անկախութեան գաղափարը փոխանցենք մեր յառաջիկայ սե-

րունդներին, որովհետեւ առանց այս անկախութեան գաղափարի պահպանման, գոյութիւն չի ունենայ նաեւ անկախութիւնը: Մենք իրաւունք չունենք չփայտալուել եւ մեր յաջորդներին չփոխանցելու այս կարեւոր գաղափարը, յատկապէս այսօր, որ ունենք վերանկախացած հայրենիք, որովհետեւ անկախութեան ձեռքբերումը եթէ դաժան է եւ բաւականին զոհողութիւն պահանջող, ապա անկախութեան պահպանումը կրկնակի եւ եռակի ճիգեր ու ջանքեր է պահանջում»:



Բանախօսութիւնից յետոյ, հրաւիրեց Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը՝ իր լեզուափոխականաշունչ խօսքը փոխանցելու ժողովրդին:

Սրբազան Հայրը ողջունելով ժողովրդի ներկայութիւնը, ասաց. «Ազատութիւնը եւ անկախութիւնը չի տրուում, այլ ձեռք է բերուում, հետեւաբար ինձ համար Մայիս 28-ը խորհրդանիշ է նաեւ խաչի՝ զոհողութեան եւ ներքումի, որովհետեւ վեց դար ստրկութիւնից յետոյ եւ յատկապէս ցեղասպանութիւնից յետոյ մեր ժողովուրդն ընտրեց ազատութեան ճանապարհը: Ներքումով ու զոհողութեամբ իջան նոր Աւարայր՝ Սարդարապատ, Բաշ Ապարան ու Ղարաքիլիսա, ո՛չ ասելու բոլոր թշնամիներին, որոնք մեր ժողովրդին ստրկութեան մէջ էին պահում: Եթէ այսօր առաջին հանրապետութեան տօնը մեզ ուրախացնում է, սա յաղթանակի օր է: Այս տօնը իրաւունք է տալիս մեզ ուրախանալու, բայց նաեւ մեզ պարտաւորեցնում է պահել Հայաստանը, շէնացնել եւ հզօրացնել Հայաստանի պետականութիւնը: Այսօր Մայիս 28-ի տօնը գայիս է մէկ պատգամ տալու մեզ իւրաքանչիւրիս՝ մեր ինքնութիւնն առողջ պահենք, մեր լեզուն՝ անաղարտ, մեր լուսաւորչեան հաւատը սուրբ պահենք, պահենք մեր բոլոր սրբութիւնները եւ արժէքները»:



Հանդիսութեան պաշտօնական բաժնից անմիջապէս յետոյ սկսեց տօնախմբութիւնը, որին շունչ ու ոգի պարգեւեց Հայաստանի վաստակաւոր երգիչ Արսէն Գրիգորեանը:

Համերգի ընթացքում համայնքի տաղանդաշատ երգչուհի Փարելի Ամիրխանեանը ներկայացրեց մի քանի ազգային-հայրենասիրական երգեր:



Մայիս 28-ին նկրած տոնակատարությունն ասարուեց շքեղ հրավառությամբ: Յատկանշելի էր, որ «Ռուբէն»

Երիտասարդական Միութեան կողմից դասատուել էր կրպակներ, ցանկացող երեխաներին դիմայարդարելու՝ եռագույն դրօշի երանգներով: Միութիւնը պատրաստել էր նաեւ օրուայ առիթով սկաւառակներ, որոնք բաժանւեցին ներկաներին:

ԾՉ Ծ à ծ , Չ Ղ ծ à օ Թ Ե օ Մ

Ի գիտութիւն Նոր Զուղայի եւ Շահինշահի յարգոյ հայ համայնքների երիտասարդութեան տեղեկացնում ենք, որ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը երիտասարդութեան խնդիրներին վերահասու լինելու եւ Սպահանի Հայոց Թեմի ազգային աշխատանքներում նրանց ընդգրկելու նպատակով, կեանքի է կոչել «Երիտասարդական Խորհուրդ», բաղկացած Նոր Զուղայի եւ Շահինշահի համայնքների երիտասարդներից: Խորհուրդն անցել է աշխատանքի եւ կատարել պարտականութիւնների բաժանում ըստ հետեւեալի.-

Աբրահամ Յովսէփեան՝ նախագահ, Մանէ Թահմազեան՝ քարտուղար, Նարբէ Զարդն Դաւուդ՝ գանձապահ, Սելին Ղարիբեան, Ռուբէն Մինասեան, Սարիկ Ղազարեան, Նարեկ Խաչիկեան, Դուրան Տէր-Յովհաննիսեան, Սանասար Թահմազեան, Սարմէն Շահմիրզայեան՝ խորհրդատու անդամներ:

Այսու կոչ ենք անում Նոր Զուղայի եւ Շահինշահի հայ համայնքի երիտասարդներին, իրենց խորհուրդներով ու առաջարկներով նեցուկ կանգնել մեզ:

Խորհրդի հետ կապ հաստատելու համար կապել Ազգային Առաջնորդարան՝ 6243471-2 հեռախօսահամարներով, երկուշաբթի եւ չորեքշաբթի օրեր, առաւօտեան ժամը 9:00-ից 12:00-ը՝ օրդ. Սելին Ղարիբեանին:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԵՄԻՍ ԽՈՆԱՐՎԻԱԾ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐԻՑ ՄԷԿԻ ԶԱՆԳՈՂ ՆԻԻՌԻՄՑ ՌԻՍԻԻԱՅԻ ՎՅՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սպահանի Հայոց Թեմի ազգային իշխանութան միջոցով վերջերս Ուրմիայի Հայոց Առաքելական Ս. Ստեփանոս եկեղեցուն է նւիրել Թեմիս խոնարհած եկեղեցիներից մեկի զանգը, որը պահուում էր Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի պահոցում:

Այս կապակցութեամբ ստացել է Ատրպատականի Հայոց Թեմի կաթողիկոսական փոխանորդ գերայ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթեանի 21 յունիս 2012 թւակիր շնորհակալական նամակը՝ ուղղւած Թեմիս թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանին եւ Թեմական Խորհրդին, որտեղ ասւած է.

«Անհուն գոհունակութեամբ իմացանք Ատրպատականի Հայոց Թեմի Ուրմիայի մեր Գործակալական Խորհրդից, թէ Ուրմիայի Ս. Ստեփանոս եկեղեցուն նւիրաբերել էք թանկարժէք մի գանգակ:

Իրանահայ քոյր թեմերի միջեւ փոխադարձ գործակցութեան եւ սիրոյ այս ոգին իրապէս օրինակելի նկատելով, մեր երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնն ենք ուղղում Ձեզ: Ուրմիայի հայաշատ շրջանի ժողովուրդը յատկանշուում է իր քրիստոնէական ուժեղ հաւատով եւ կապաւածութեամբ մեր եկեղեցուն եւ ազգային արժէքներին: Առ այդ, Ձեր ուղարկած այդ սրբազան նւէրը եկեղեցու գանգակատան մէջ կախելով, եւ ամէն անգամ հնչելուն՝ հաւատացեալները դէպի եկեղեցի հրաւիրելու պահին, մնայուն յուշարարը պիտի լինի Ձեր բարեգործութեան:

Աղօթում ենք առ բարձրեալն Աստուծ, որ Ձեզ եւ Ձեր Թեմի ողջ կառույցներին ու հաւատացեալ ժողովրդեան տայ արեւշատութիւն, բազմաբեղուն գործունէութիւն եւ յաջողութիւններով լի օրեր»:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ «ԿԱՏԱՐԻՆԵՆՆ» ՏՂԱՅՈՑ ԵՒ «ՔՆՆԵՆԵՆՆ» ԱՂԶԿԵՆՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՄԻԱՄԱՐԱԲԱՐ ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ՄԵԾ ԵՂԵՈՒՆԻ ԲԻՐՆՈՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԼՆԹԱՌՈՒՄ ՅԻՆԱՏԱԿԸ

Անսալով Մեծ Եղեռնի անմեղ զոհերի կանչին՝ հայ ժողովրդի պահանջատիրական ձայնն առաւել լսելի դարձնելու համար, չորեքշաբթի, մայիսի 9-ի կէսօրին, Ն.Զ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, նախաձեռնութեամբ «Կատարիներ» տղայոց եւ «Քանանեան» աղջկանց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների Աշակերտական խորհուրդների, պատշաճ ձեռնարկով ոգեկոչւեց Հայոց Յեղասպանութեան 97-ամեակը. ձեռնարկ, որը լրիւօրէն իրականացւեց օրւայ խորհրդին գիտակից աշակերտութեան միջոցով:

աշակերտներից բացի, միջոցաւորում հրաւիրել եւ ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանը, Շահինջահի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկերեանը, Հայոց Յեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի եւ Կրթական Խորհրդի ներկայացուցիչները:



Երկու դպրոցների պատասխանատուներից եւ



Որպէս օրւայ հաղորդավար՝ Շաղիկ Մատթէոսեանը ողջոյնի խօսք ուղղեց ներկաներին, որից յետոյ իր բացման խօսքում կարեւորութեամբ ընդգծեց. *«Մեզ հետ կատարւածը միջազգային առումով, թէ դրանից դուրս, մի աննախադէպ եւ անօրինակ ոճիր էր: Ոճիր՝ մարդկութեան դէմ, տիեզերքի դէմ, Աստծոյ դէմ: Եւ ուզենք թէ չուզենք, նախ՝ մենք պէտք է հաստատենք ցեղասպանութիւնը, ապա՝ հաւատանք ու գիտակցենք, որ դառնանք աւելի կազմակերպ,*

քան մեզ հետ կատարածի կազմակերպողները: Մինչև վերադարձնենք այն ինչ մերն է եղել»:



Այնուհետև դասախոսությամբ հանդես եկա աշակերտուհի Մելիի Ղուկասեանը: Պարսիկ ուսուցիչներ ծրագրին ներկայ լինելու բերումով, օրայ դասախօսը ցեղասպանութեան թեմայի շուրջ կատարծ իր ուսումնասիրութեան որոշ հատուածները փոխանցեց նաե պարսկերէն լեզուով: Մելիի Ղուկասեանը նախ անդրադարձաւ Ռաֆայէլ Լեմկիհի միջոցով 1944 թականին «Ցեղասպանութիւն» տերմինի ստեղծմանը եւ Ցեղասպանութեան կանխարգելման կոնսենցիայի կազմութեանը՝ 1948 թականին, որից յետոյ պաստառի վրայ ցուցադրող պատկերներով բացատրեց յիշեալ կոնսենցիայի յօլաւածները: Այնուհետև նա մատնանշելով «Հայ Դատ»-ի եւ «Հայկական Հարց»-ի հոլովոյթները, իրաւական տեսանկիւնից անդրադարձաւ նաե հայոց պահանջատիրութեանը՝ բացելով սոյն խնդրի խոր ծալքերը:



Դասախօսութեան շարունակութեան մէջ նշեց Սեւրի դաշնագրի իրաւական արժէքները եւ Հայ Դատի առնչութեամբ վերջին ձեռքբերումներն ու մի շարք շահեկան իրադարձութիւններ:



Ծրագրի գեղարուեստական բաժնում գեղեցիկ եւ տպաւորիչ կատարումներով ներկաներին ոգեւորեցին դպրոցների աշակերտները: Նախ «Կատարինեան» տղայոց դպրոցի երգչախումբը, ղեկավարութեամբ հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի եւ երաժշտական գործիքաւորմամբ Հարմա Կարապետեանի, կատարեց «Հերիք է ընկեր», «Վեր կաց ժողովուրդ» եւ «Հայ կամաւորներ» երգերը: Այնուհետև ասմունքների եւ երգերի մենակատարմամբ հանդէս եկան դպրոցի աշակերտները: Ասմունքեցիին Թանիա Մինասեանը՝ Սիլւա Կապուտիկեանի «Քելէ լաօ», Լաւրա Խուդաբախշեանը՝ Վարանդի «Հայկ դիւցազն» եւ Միո Ղազարեանը՝ Տիգրան Պօղոսեանի «Հրանտ Դինքի արնավառ յիշատակին» բանաստեղծութիւնները, իսկ ազգային-յեղափոխական երգերի կատարմամբ հանդէս եկան Ծաքէ Մովսիսեանը՝ «Հայրենիք», Վանա Ծիրանեանը՝ «Թոչէի մտքով տուն» եւ Լալա Ալեքսանդրեանը՝ «Յոյսի մեղեդի» երգերով: Հարկ է նշել, որ էլեկտրիկ գիթառով մի երաժշտութիւն կատարեց Վանանդ Գեորգեանը:

Անհատական ելոյթների աւարտին Մարտունի Խաչիկեանը կատարեց «Armenia» երգը, որի խօսքի եւ երաժշտութեան հեղինակն է հոգձ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը: Որպէս գեղարուեստական կատարումների եզրափակիչ ելոյթ, երգերով հանդէս եկա «Քանանեան» աղջկանց դպրոցի ուղեցոյց բաժնի երկրորդ եւ երրորդ դասարանների աշակերտներից կազմաւծ երգչախումբը, որը դպրոցի պատասխանատուների ուսուցմամբ կատարեց «Քայլ առաջ» եւ «Ո՛չ, չեն մեռնում հերոսները» երգերը: Յատկանշական է, որ գեղարուեստական բաժինը



ընդմիջում էր օրան պատշաճ խօսքերի ընթերցմամբ՝ Շաղիկ Մատթեոսեանի եւ Մամբրէ Թափմագեանի միջոցով:

Այնուհետեւ յանուն Թեմի Կրթական Խորհրդի, արտայայտեց Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանը, որը գերազանց գնահատելով ձեռնարկը, շնորհակալական խօսք ուղղեց կազմակերպիչներին:

րեց. «Այսպիսի երիտասարդներ ունենալը նշանակում է, որ մենք շարունակելու ենք մեր պահանջատիրական պայքարը: Այսօր առաւել եւս մենք լսում ենք մեր նահատակների կտակին եւ իրենցով ներշնչւած ենք անցնում ճանաչումից հատուցում պահանջատիրական պայքարին»:



Նա իր խօսքում դիմելով աշակերտներին ասաց. «Մերօրեայ պայմաններում հայ երիտասարդի մեծագոյն պարտականութիւնն է, որ զինւի գիտութեամբ եւ հետազոյում սատար հանդիսանայ հայրենիքի բարգաւաճման եւ զարգացման գործին»:

Կրթական Խորհրդի ատենապետի խօսքին յաջորդեց թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի հայրական պատգամը:

Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնելով հայոց դպրոցներում հայեցի ոգի եւ դաստիարակութիւն տալու համար, մեծապէս գնահատեց ձեռնարկի ընթացքում խօսքերով ու գեղարուեստական կատարումներով ելոյթ ունեցած աշակերտներին եւ անւազ-



Թեմակալ առաջնորդն իր պատգամի ասարտին կոչ ուղղեց աշակերտներին, որ լիցքաւորեն եւ հարըստանան ուսուցիչների միջոցով մատուցուող հայկականութեամբ ու գիտութեամբ, քանի որ այդպիսով կարող են միջազգային բեմերի վրայ եւ ատեաններում մեր ազգի արժէքներն ու անժխտելի իրաւունքները պահանջել եւ պաշտպանել:

Վերջում ներկաներին բաժանեցին «Կատարի-նեան» դպրոցի աշակերտների միջոցով պատրաստուած «Ապրիլեան օրերն այլեւս սգոյ օրեր չեն» խորագրով բրոշխուրները:

Պատշաճօրէն խնամուած եւ ամբողջութեամբ օրւայ խորհուրդը յուշող այդ ձեռնարկն ասարտեց հաստիացնելով, որ մեր նոր սերունդին եւս անխնջ պաշպանն է հայոց արդար պահանջատիրութեան:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97-ԱՄԵԱԿԻՆ ՆԻՐԻԱԾ ԱԿՏՆԵՐԻ ՄՐՑՈՅԹ՝ «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԲԱԺՆԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՈՒՇԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ



Հինգշաբթի՝ մայիսի 3-ի երեկոյան ժամը 4-ին, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, նախաձեռնությամբ «Քանանեան» աղջ. ուղեցույց եւ միջնակարգ դպրոցի տեսչութեան եւ հայերէն առարկաներ դասաւանդող ուսուցչուհիների, կազմակերպել էր ասարտաճառի ներկայացման մրցոյթ՝ դպրոցի միջնակարգ բաժնի երրորդ դասարանի աշակերտուհիների մասնակցութեամբ, որը նկիրած էր Մեծ Եղեռնի 97-ամեակին:

Ծրագրին ներկայացել էին Կրթական Խորհրդի եւ Հայոց Ցեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի ներկայացուցիչները, դպրոցի ուսուցիչները, աշակերտուհիները, ծնողներն ու հարազատները:

Նախքան ծրագրի պաշտօնական բացումը, վիճակահանությամբ ճշտեց մասնակիցների հերթականութիւնը: Իւրաքանչիւր աշակերտի ելոյթի գնահատականը կազմելու է նրա շարադրութեան ասարտական քննութեան 10 նիշը:

Սկզբում ներկաներին ողջունեց «Քանանեան» դպրոցի փոխտեսչուհի Ռիմա Սիմոնեանը՝ սույն մրցոյթը նմանատիպ միւս մրցոյթներից առանձնացնելով՝ իր քննութեան յատկութեամբ:

Մրցոյթի իրաւարար կազմը բաղկացած էր դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանից եւ հայերէն առարկաներ դասաւանդող ուսուցիչներ Քառուիկ եւ Սեդա Դիլանչեաններից, ովքեր իւրաքանչիւր նիւթի մատուցելուց յետոյ, յայտնելով իրենց տեսակէտները, ներկայացնում էին դրական եւ բացասական կողմերը:

Աշակերտուհիները հետեւեալ հերթականությամբ ներկայացրեցին իրենց ասարտաճառերը.

Միրնուշ Ղուկասեան՝ «Տիգրան Մեծ», Լաուրա Խուղաբախչեան՝ «Նեմրույթը», Լալա Ալեքսանդրեան՝ «Հայկական յայտնի գորգեր», Թեմի Մկրտչեան՝ «Խաչքարեր», Քրիստինէ Յակոբեան՝ «Կիլիկիայի հայկական թագաւորութիւն», Մեղմիկ Սիմոնեան՝ «Հին եւ միջնադարեան գրականութիւն»,

Վանէ Թահմազեան՝ «Յովհաննէս Թումանեանի Անուշ պոէմը», Ռայիսա Դիլանչեան՝ «Սփիւռքահայութիւնը», Նարինէ Ալլահվերդեան՝ «Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանք», Նարէ Կիրակոսեան՝ «Յովհաննէս Ալազովսկի», Նարէ Մարկոսեան՝ «Նոր Զուղայի հայ նկարիչները», Լալազէ Լալազարեան՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն», Նարէ Սիմոնեան՝ «Դրագներ Ճակատամարտից», Ալինա Ալեքսանդրեան՝ «Մարտիրոս Սարեան», Թանգիկ Միրզախանեան՝ «Կոմիտաս», Շաքէ Մովսիսեան՝ «Հայ ժողովրդի դիցարանը», Նայիրի Իսախանեան՝ «Անի քաղաքը», Նայիրի Թումանեան՝ «Հայաստանը Խորհրդային ժամանակահատուածում»:

Ոմանք իրենց ներկայացմանը զուգահեռ ցուցադրում էին պատկերներ:

Ելոյթների ասարտին Կրթական Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանը գնահատելով բոլորին, յայտնեց, որ յաջողութիւնը երկու դուրս գալու է, առաջինը՝ մասնագիտութիւնն է, իսկ երկրորդը՝ լալաբերութիւն ստեղծելը, որն առաւել կարեւոր է:

Այնուհետեւ Կրթական Խորհրդի անդամ Արթին Քեշիշեանն եւս իր գնահատանքի խօսքն ուղղելով տեսչութեանը, ուսուցչական կազմին, ի մասնաւորի աշակերտութեանը, նշեց, որ պարտւում են այն ժողովուրդները, որոնք գիտեն իրենց պատմութիւնը:

Վերջում բոլոր մասնակիցներն ստացան Հայոց Ցեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի կողմից պատրաստուած գնահատագրերն ու «Կատարիներ» տղայոց ուղեցույց եւ միջնակարգ դպրոցի Ծնողական Խորհրդի անդամ Արմինէ Ղարախանեանի կողմից նկիրած յուշանւերները:

Իրաւարար կազմի կողմից լաւագոյն ճանաչեցին Շաքէ Մովսիսեանը, Նարէ Կիրակոսեանը, Ալինա Ալեքսանդրեանը, Միրնուշ Ղուկասեանը, Նայիրի Իսախանեանը եւ Լալա Ալեքսանդրեանը:

Ծրագրի ընթացքում Շաքէ Մովսիսեանն իր գեղեցիկ երգով նոր շունչ պարգեւեց մրցոյթին:

**ՁԵՌՆԱՐԿ ՆԻՐԻԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97-ԱՄԵԱԿԻՆ՝
ՊԱՐՍԻԿ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ**



Կազմակերպութեամբ Հայոց Ցեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի եւ համագործակցութեամբ՝ «Ռուբէն» Երիտ. Միութեան ու «Արարատ» Միութեան Ուսանողական Միաւորի, չորեքշաբթի՝ մայիսի 23-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեհուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ պարսիկ հայրենակիցների համար կազմակերպուած ամենամեայ միջոցառումը:

Մարտիրոսեանի հրաւերով ներկաները մէկ րոպէ լուրթեամբ յոտնկայս յարգեցին մէկուկէս միլիոն անմեղ զոհերի յիշատակը, որից յետոյ Արտեմիս Խաչեանն ընթերցեց Հայոց Ցեղասպանութեան 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի խօսքը:



Ձեռնարկին ներկայ էին՝ Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը, քահանայ հայրերը, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Ցանձնախմբի ներկայացուցիչներն ու պարսիկ հրաւիրեալներ:

Ծրագրի սկզբում օրայ բեմավար՝ Կարին Տէր-



Այնուհետեւ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը «Հայոց Ցեղասպանութեան Հարցը Իրանի գրողների եւ գիտաշխատողների գրածքներում» նիւթով, որն արտայայտեց. «*Իրանի ժողովուրդը իւրաքանչիւր տարի ակննատեսն է Ապրիլ 24-ի առթիւ կազմակերպուած միջոցառում-*

ների եւ քայլարշաւների, որոնք կատարուում են հայերի կողմից: Կան անհատներ, որոնց համար ճանաչած է Յեղասպանութիւնը, սակայն պարսիկ հայրենակիցների մտաւորականութիւնը տարբեր հանգամանքներից ելնելով, տեղեակ են այս Յեղասպանութիւնից եւ դեռ աւելին՝ նիւթեր եւ տեսակէտներ են ներկայացրել, որոնք արժէքաւոր են»:

կան նման մտաւորականներ, որոնք այսօր պաշտպանում են հայ ժողովրդին եւ ներկայացնում են պատմութիւնը ինչպէս որ եղել է, ուրեմն համոզւած լինենք, որ լուծելու է Հայ Դատն ու յետ է վերադրաձելու մեր պապենական հողերը»:




Այնուհետեւ պրն. Առաքելեանը ներկայացրեց համաշխարհային մակարդակում յայտնի պարսիկ բանաստեղծների եւ պատմագէտների գրքերի յօդւածները, որոնցով տեղեկութիւններ են փոխանցել եւ վկայել են թուրք ջարդարարների միջոցով 1915 թականին կազմակերպւած ցեղասպանութեան մասին եւ այդ ընթացքում հայ ժողովրդի կրած տառապանքների եւ անփոխարինելի բարոյական կորստի վերաբերեալ, ինչու չէ նաեւ տեղեկութիւններ են փոխանցել այդ ընթացքում կազմակերպւած հայ ժողովրդի դիմադրութիւնների մասին:

Ծրագրի երկրորդ բաժնում ցուցադրեց «Արմին Վէգներ» վաւերագրական ֆիլմը, որից յետոյ գեղարւեստական բաժնում համայնքիս տաղանդաւոր երաժշտագէտ եւ Ս.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախմբի ղեկավար Համիկ Ալեքսանդեանը հանդէս եկաւ դաշնամուրի կատարմամբ եւ մեներգով՝ ներկայացնելով Արամ Խաչատրեանից, Առնօ Բաբաջանեանից եւ Կոմիտասից երաժշտական հատուածներ: Այս բաժնում նաեւ ասմունքեց Մանհա Ղուկասեանը:



Ծրագրի աւարտին տեղի ունեցաւ ընդունելութիւն:



Վերջում յարգելի դեսպանն աւելացրեց. «Եթէ

ՏՂԱՅՈՑ ԲԱՍԿԵՏԲՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽԱՂԵՐ՝ ՆԻՐԻԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 97-ԱՄԵԱԿԻՆ

Հայոց Ցեղասպանության 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի նախաձեռնությամբ եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության համագործակցությամբ, Միության մարզասրահում տեղի ունեցաւ տղայոց բասկետբոլի քառակողմ բարեկամական երկօրեայ խաղեր՝ մասնակցությամբ «Արարատ» Միության, «Ռահ-օ-Թարաբարի» եւ «Խանէլէ Բասկեթբալ» վաստակաւորների ու «Արարատ» Միության բասկետբոլի խմբերի:

րադարձաւ Հայոց Ցեղասպանության իրողութեանը, իսկ վերջում ներկայացրեց մասնակիցներին:



Երկու օրերի ընթացքում կայացան չորս խաղեր՝ հետեւեալ արդիւնքներով.

Հինգշաբթի՝ 24 մայիսի

«Արարատ» Միության վաստակ.՝ 28 - «Ռահ-օ-Թարաբարի» վաստակ.՝ 59

«Արարատ» Միութիւն՝ 74 - «Խանէլէ Բասկեթբալ» վաստակ.՝ 65

Ուրբաթ՝ 25 մայիսի

«Արարատ» Միության վաստակ.՝ 26 - «Խանէլէ Բասկեթբալ» վաստակ.՝ 72

«Արարատ» Միութիւն՝ 65 - «Ռահ-օ-Թարաբարի» վաստակ.՝ 70

Սոյն խաղերի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ հինգշաբթի՝ մայիսի 24-ի երեկոյեան, ներկայութեամբ՝ Թեմի ազգային մարմինների ու շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչների եւ հայ ու պարսիկ հայրենակիցների:



Նախ՝ «Արարատ» Միության Սկստուական Միաւորի անդամների միջոցով տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, որից յետոյ հնչեց Իրանի Իսլ. Հանրապետութեան հիմնը՝ ներկաների յոտնկաչ ունկնդրութեամբ:

Ուրբաթ՝ վերջին խաղի աւարտին, տեղի ունեցաւ սոյն մրցաշարի փակման հանդիսութիւնը, որտեղ Սպահանի աղջկանց բասկետբոլի յանձնախմբի փոխնախագահ եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության Կենտ. Վարչութեան փոխնախագահ Ալլին Մելիքեանի ու Հայոց Ցեղասպանության 97-ամեակի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի նախագահ Վահէ Թորոսեանի միջոցով գնահատագրեր եւ յուշանւէրներ շնորհեցին մասնակից խմբերի անդամներին:

Այնուհետեւ բացման խօսքով հանդէս եկաւ Նարբէլ Զարդըն Դաւուդը, որը պարսիկ հայրենակիցների ներկայութեան բերումով՝ այն ընթերցեց պարսկերէնով: Նա շնորհակալական խօսք ուղղելով հրաւիրեալ խմբերին՝ հրաւերի ընդատաջման համար, անդ-

ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՎ ԵԶՐԱՓՈՒԿԵՑ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԱԿԱՊԱՐՏԵԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Ուսումնական տարեշրջանի իրա-
քանչիւր ամիս իր յատուկ բոյրն ունի
դպրոցականների համար, սակայն
առանձնապատուկ են մայիս եւ յունիս
ամիսները, այն պարզ պատճառով, որ
նշած ամիսներին արդիւնաւորում են
մի ամբողջ ուսումնական տարւայ ըն-
թացքում ուսուցիչների եւ աշակերտ-
ների կատարած աշխատանքները:

Այս տարի, յունիսի 1-ին՝ «Երեխա-
ների Իրաւունքների Պաշտպանու-
թեան Միջազգային Օր»-ը, երեկո-
յեան ժամը 7-ին, «Արարատ» Միու-
թեան սրահում գողտրիկ եւ ոգետրիչ
ձեռնարկով եզրափակեց Նոր Զու-
ղայի Հայոց Ազգային Մանկապար-
տեզ-Նախակրթարանի աշխատանքը
եւ դպրոցի սաները վարպետօրէն
հաշտութիւններ կատարեցին բոլոր-
ին: Զեռնարկին ներկայ էին Կրթա-
կան Խորհրդի ներկայացուցիչներն ու
սաների հարազատները:

զամ եւս յիշեցնելու, որ մեր մանուկներն ունեն այնպիսի իրա-
ւունքներ, որոնց ոչ ոք իրաւունք չունի ստանահարելու կամ չըջան-
ցելու»: Տեսչուհին իր խօսքի աւարտին յատուկ շնորհակալական
խօսք ուղղեց դպրոցի աշխատակազմին եւ Ծնողական Խորհրդին՝
անձնիրաբար աշխատելու, իսկ ծնողներին՝ իրենց նիւթա-բարոյա-
կան օժանդակութիւնների համար:



Ծրագրի գեղարւեստական բաժնում առանձնաբար ելոյթ ունե-
ցան Մանկապարտեզի մանուշակագոյն եւ դեղին խմբակներն ու
Նախակրթարանի աշակերտները:

Առաջին արարը պատկանում էր մանուշակագոյն խմբակին, որն
անդրադառնալով բնութեան զարթօնքին՝ գեղեցկօրէն նկարագրեց
գարունը: Սաներն ստանձնել էին արեւի, ծիծեռնակների, մեղուների,
ծաղիկների եւ պարտիզայանների դերերը եւ հանդէս էին գալիս հա-
մաշափ շարժումներով ու անհատական եւ խմբակային արտայայտու-
թիւններով: Նախ արեւը եւ ծիծեռնակներն աւետեցին գարնան գա-
լուստը, որից յետոյ բացեցին ծաղիկները՝ իրենց շուրջ հրաւիրելով
մեղուներին ու հոգատար պարտիզայաններին: Ներկայացման աւար-
տին հնչեցին երկու խմբակային երգեր՝ նկիրած բնութեանը:



Սկզբում բացման եւ ողջոյնի խօս-
քով հանդէս եկաւ դպրոցի տեսչուհի
Քատրին Դիւանչեանը: Նա անդրա-
դառնալով օրւայ առիթին, ասաց.
«Ամէն տարի մենք յիշելով այս տօնը,
մեր մանուկներին մաղթում ենք եր-
ջանիկ մանկութիւն եւ փայլուն
ապագայ եւ այս առիթը պատեհ ենք
համարում մեր ծնողներին մէկ ան-



Ծրագրի շարունակութեան մէջ բեմը տրամադրեց Դեղին խմբա-
կին, որի ներկայացումը նկիրած էր Հայ Գրքի տարւան եւ բոլոր հայ
մանկագիրներին: Սկզբում խմբակի աղջիկները բեմ մուտք գործեցին
հայկական պարային շարժումներով, որն աւարտեց շուրջպարով:

Այնուհետև նրանցից իրաքանչիւրն առանձնաբար արտայայտեց օրան պատշաճ խօսքեր: Աղջիկների առաջին խումբը ներկայացրեց Յովհաննէս Թումանեանի կենսագրականից հատածներ, որին յաջորդեց մեծ գրողի «Սուտիկ Որսկանը» ներկայացումը՝ խմբակի հինգ տղաների կատարմամբ: Ներկայացման երկրորդ բաժնում աղջիկների երկրորդ խումբն անդրադարձաւ Աթաբեկ Խնկոյեանին եւ նրա ստեղծագործութիւններին, որը նույնպէս աւարտեց անուանի գրողի «Մկների ժողովը» հեքիաթի բեմականացմամբ՝ խմբակի միւս տղաների միջոցով: Դեղին Խմբակի կատարումներն եզրափակեցին «Հայ Գրքի Տարւան» նկրտած խմբական ասմունքով եւ երեք երգերի կատարմամբ:

Աւանդոյթի համաձայն, որպէս գեղարւեստական բաժնի եզրափակիչ ելոյթ, իրագործեց Նախակրթարանի սաների ներկայացումը: Գրանաչ դարձած աշակերտներն իրենց կատարմամբ հրաժեշտ տւեցին այբբենարանին, խոստանալով որ անաղարտ են պահելու մայրենի լեզուն: Նախակրթարանի աշակերտներից մէկը ներկայացնում էր Մեսրոպ Մաշտոցի կերպարը, իր շուրջ հաւաքելով հայոց լեզւի նորատի գիւնդներին՝ դասարանի միւս աշակերտներին, որոնցից իրաքանչիւրի կրծքին ամրացւած էր մի տառ: Նրանք ներկայացնելով իրենց կրծքին ամրացւած տառը՝ վերջում այդ տառերի օգնութեամբ կազմեցին «Հրաժեշտ այբբենարանին» բառակապակցութիւնը: Ներկայացման յաջորդ բաժնում պատգամով հանդէս եկաւ Մեսրոպ Մաշտոցը եւ իր խրատական խօսքը փոխանցեց բոլորին:

Գեղարւեստական բաժինն աւարտեց՝ Մեսրոպ Մաշտոցին եւ Այբուբենին նկրտած մի փունջ խմբական երգերով ու արտասանութիւններով՝ Նախակրթարանի ընթացաւարտ աշակերտների կատարմամբ:

Ծրագրի երկրորդ բաժնում ձեռամբ՝ Կրթական Խորհրդի ատենապետ Զանսոն Աղաբաբայեանի, դպրոցի տեսչուհի Քառուիկն Դիլանչեանի եւ իրաքանչիւր դասարանի

պատկան ուսուցչուհու, առանձնաբար տեղի ունեցաւ մանուշակագոյն եւ դեղին խմբակների ու Նախակրթարանի վկայագրերի բախշման արարողութիւնը:



Ձեռնարկի աւարտին փակման խօսքով ելոյթ ունեցաւ Կրթական Խորհրդի ատենապետը: Զանսոն Աղաբաբայեանն իր ուրախութիւնը յայտնելով երեխաների գեղեցիկ ելոյթների կապակցութեամբ, գնահատանքի խօսք ուղղեց դպրոցի տեսչութեանը, ուսուցչական կազմին ու Ծնողական Խորհրդին: Նա յայտնելով, որ յաջորդ տարի Մանկապարտէզի աշակերտութեան թիւը զգալիօրէն բարձրանալու է, անդրադարձաւ ծնողների դերակատարութեանը՝ իրենց զաւակների դաստիարակութեան եւ կրթութեան հարցերում ու ասաց. «*Ծնողները պէտք է տիրապետեն նոր գիտելիքներին եւ իրենց զարգացնեն օրուայ պայմաններին համապատասխան, որպէսզի կարողանան դրական ազդեցութիւն ունենալ իրենց զաւակներին կրթելու գործում՝ չսահմանափակելով միայն դպրոցի կողմից կիրառուող ուսուցումներով*»:



Վերջում ներկաները մեծ գոհունակութեամբ դիտեցին կից սրահում տեղակայւած ցուցահանդէսը, որտեղ ցուցադրուել էին՝ Մանկապարտէզ-Նախակրթարանի աշակերտների անհատական եւ խմբական ձեռքի աշխատանքները, նկարչութիւններն ու մանրակերտները:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱԲԱՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԷՆ (10-ԱՄԵՏԱԿ)



Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նոր Զուղայի Կիրակնօրեայ Դպրոցը, յանուն իր մատակցած սերնդի քրիստոնեական առողջ դաստիարակության, 2002 թականին, երկար տարիներ դադարից յետոյ, վերսկսեց իր սուրբ աշխատանքը ժամանակի առաջնորդ գերայ. Ս. Շահան Ծ. վրդ. Սարգիսեանի եւ Կրօնական Խորհրդի ջանքերով:

Կայն ուսուցիչներն աշխատում էին մեծ սիրով եւ նւիրումով, հայ մանկանը կրթելով քրիստոնեական առողջ դաստիարակութեամբ:



2007-2008 ուսումնական տարեշրջանին, շնորհիւ Թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ Կրօնական Խորհրդի, Կիրակնօրեայ Դպրոցն ունեցաւ իր կենտրոնատեղին, եւ կահաւորեց արդիական միջոցներով, սաների համար առաւել հաճելի մթնոլորտ ստեղծելով:

Դպրոցն իր աշխատանքն սկսեց մանկապարտէզից-ուղեցոյց բաժինների աշակերտութեան համար, դասընթացները տեղի էին ունենում դպրոցներում: Ապա 2004-ից դասընթացները շարունակեցին Ս. Յովհաննու եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներում, դասաւանդութեան պահերի համար յարմարութիւնները սահմանափակ էին եւ պայմանները դժարին, սա-



Կիրակնօրեայ Դպրոցն իր 10-ամեայ գործունեության ընթացքում ջանք չի խնայել հայ մանկանը կրթելու քրիստոնեական գիտելիքներով, փորձել է սերտացնել նրա կապը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:



Նոր Զուղայի Կիրակնօրեայ Դպրոցի 2011-2012 ուսումնական տարեշրջանի փակման հանդեսը, որը նվիրված էր դպրոցի վերաբացման 10-ամեակին, հովանաւորութեամբ Թեմիս առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի, տեղի ունեցաւ 2 մայիս 2012 թւականին, Ն.Ջ. Հայ Մ.Ս. «Արարատ» Միութեան սրահում: Ծրագրին ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները եւ սաների ծնողները:

Ծրագիրը բաղկացած էր երկու բաժնից. սկզբում սաները թատրոնի միջոցով ներկայացրեցին աշխարհի արարման եւ ապա Յիսուս Քրիստոսի կեանքի վերջին օրերի՝ Ասագ Ծաբաթուայ իրադարձությունները: Իսկ երկրորդ բաժնում հանդէս եկան հոգեւոր երգերի եւ շարականների երգեցողութեամբ, արտասանեցին աղօթքներ եւ սաղմոսներ: Ծրագրի աւարտին սաները Սրբազան Հօր եւ Կրօնական Խորհրդի ատենապետի ձեռամբ ստացան վկայագրեր, իսկ հինգերորդ դասարանի սաներին յանձնեցին նաեւ յուշանւերներ:



Սրբազան Հայրն իր փակման խօսքի մէջ գնահատեց սաներին, ծնողներին եւ յատկապէս ուսուցչական կազմին, որոնք սիրայօժար աշխատեցին եւ երեխաներին կրթեցին կրօնի եւ հաւատի անհրաժեշտ գիտելիքներով, սերտացրին նրանց յարաբերութիւնը եկեղեցու հետ, նրանց ծանօթացնելով Հայ Եկեղեցու հաւատամքին, շարականներին եւ ասուածաշնչեան պատմութիւններին:



Անցնող տարիներում դպրոցի աշխատանքներն եղել են.-

- ա) կրօնական գիտելիքների փոխանցում՝ Քրիստոնեական Դաստիարակութեան Խորհրդի կողմից պատրաստուած գրքերի միջոցով
 - բ) Ասուածաշունչ Մատենի ծանօթացում եւ ընթերցում
 - գ) Հայ Եկեղեցու կառուցի, սպասքների, տօների եւ պատմութեան ծանօթացում
 - դ) շարականների եւ հոգեւոր երգերի ուսուցում
 - ե) ձեռքի աշխատանքների պատրաստում
- որոնք իրագործուել են շնորհիւ Թեմիս բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի, Կրօնական եւ Քրիստոնեական Դաստիարակութեան խորհուրդների օժանդակութեամբ:

Այս տարի Կիրակնօրեայ Դպրոցն աշխատեց հետեւեալ կազմով.

- տեսչուհի եւ դասաւանդութեան պատասխանատու՝ տկն. Դեզիրէ Մկրտչեան
- երաժշտութեան պատասխանատու՝ օրդ. Սարինէ Յարութիւնեան
- ձեռքի աշխատանքի պատասխանատուներ՝ տկն. Լիդա Յարութիւնեան եւ օրդ. Ալվարդ Զարգարեան եւ Ադրինէ Օհանեան

Յատկանշելի է, որ շուրջ երկու տարի է Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմում ներառուել են դպրոցի նախկին սաներ՝ օրդ. Արփի Դիլանչեանը եւ Անի Նովշադեանը:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «ՏԱԹԵՒ» ԵՐԳՉԱԽՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ



Ուրբաթ՝ 4 մայիսի երեկոյան ժամը 7:30-ին, Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալեմուշ Տէրեան» սրահում, հովանաւորութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբաղէ եպս. Չարեանի եւ խմբավարութեամբ փորձառու եւ շնորհաշատ երիտասարդ Համիկ Ալեքսանդրեանի, տեղի ունեցաւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբի 12-րդ տարեկան համերգը, որին ներկայ էին՝ առաջնորդ Սրբազան Հայրը, Ծափինշահրի հայ համայնքի հոգեւոր հովիւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների, հայոց ազգային դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչները եւ հայ մշակութիւն ու արւեստին հաւատարիմ անձիք:

Յանուն «Տաթեւ» երգչախմբի Վարչութեան, Վեհանուշ Աւետումեանն ընթերցեց օրայ խօսքը, յայտնելով՝ *«Անժխտելի փաստ է, որ սփիւռքեան դժւարին պայմաններում, ուր շրջապատը եւ մթնոլորտը լի է տարբեր գայթակղութիւններով եւ մարտահրաւէրներով, անաղարտ հաւաքական աշխատանքները, այն էլ ազգային եւ հասարակական ոլորտում, իրենց դրական եւ ազդեցիկ դերն ունեն պատանի-երիտասարդների կրթադաստիարակութեան գործում եւ սեփական «Ես»-ը գտնելու ուղղութեամբ»:*

Օրայ խօսքն աւարտեց հետեւեալ պատգամով. *«Համայնքը նման է մի բերդի, որի սիւները հէնց նրա անդամներն են: Համոզուած ենք, որ իւրաքանչիւրս ցանկացած դիրքում եւ կարողութեամբ իբրեւ իրական քրիստոնեաներ, թերեւս պահպանելով մի պարզ օրէնք, կարող ենք մեր գաղութը դարձնել անբեկանելի եւ հօրը՝ սիրենք որպէսզի սիրենք, յարգենք որպէսզի յարգւենք: Հաւատանք մեր սեփական ուժերին եւ խուսափենք անիմաստ դատողութիւններից ու հոգու խռովութիւնից»:*

Վեհանուշ Աւետումեանի արտայայտած գեղեցիկ բնաբանից յետոյ՝ բեմը տրամադրեց խմբավար Համիկ Ալեքսանդրեանին եւ երգչախմբի տաղանդաշատ անդամներին, որոնք միասնաբար ներկայեցին հրամցրին հոգեհարազատ երգերի մի փունջ՝ Կոմիտասից, Կարա Մուրզայից, Սայաթ Նովայից, Ալթունեանից, Լուսինեանից, Հախինեանից, Զաքարեանից եւ մի շարք այլ երաժիշտներից:

Օրայ յայտագրի մաս էին կազմել՝ «Զինչ ու զինչ», «Զիմ վըշի», «Էս գիշեր», «Հարալօ», «Լուսնակ գիշեր», «Սարէն կուգայ ծիաւոր», «Քելեր Յոլեր», «Նաւային», «Աղբիւր եմ», «Էլեգիա», «Ճոճան»,

«Սար դարդեր», «Յիս քո դիմեթն չիմ գիդի», «Ինձ կանչում եմ», «Ուստի կուգաս» երգերը եւ «Blue Danube Waltz»-ից մի հատուածը:

Երգչախմբի գեղեցիկ եւ համադրուած ելոյթից յետոյ, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բարբաղէ եպս. Չարեանը փոխանցեց իր հայրական խօսքը:

Սրբազան Հայրը շնորհաւորելով «Տաթեւ» երգչախմբի ղեկավարին եւ անդամ-ուիհներին, որոնք մեզ են նւիրում հայկական անաղարտ երգն ու երաժշտութիւնը, աւելացրեց. *«Այսօր այս երգերը լսելով՝ մտքով գնացինք դէպի Տաթեւի վանք: Մտքով գնացինք դէպի Արարատեան դաշտ, դէպի Նորավանք, դէպի հայկական այն լեռներն ու դաշտերը, որոնք իսկապէս մեզ պատիւ կը բերեն, մեզ կը հօրացնեն, մեզ կը հարստացնեն ու մեզ կը ճանաչեցնեն ամբողջ աշխարհին»:*

Սրբազան Հայրը վերջում ասաց. *«Մեր երիտասարդութեանը կոչ ենք անում՝ սիրեն մեր հայկական երաժշտութիւնը, որն իսկապէս մեր հոգին կը խաղաղեցնի, մեզ կը հպարտացնի եւ մեզ կը հօրացնի»:*

Այնուհետեւ «Տաթեւ» երգչախմբի Վարչութեան անունից շնորհակալական խօսք ուղղեց ձեռնարկի կազմակերպման գործում օժանդակող անձանց:

ԺՈՂՈՎԴԴԱԿԱՆ ՏՕՆԱՎՐԹՈՒԹԻՒՆ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՆՔՓԱՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ

Ուրբաթ՝ մայիսի 18-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միության մարզական բաժնի բացօթյա տարածքը մարդաշատ էր, Նոր Զուղայի եւ Շահինջահի հայ համայնքը համախմբել էր մասնակցելու՝ Միության Երէջների Միաւորի Վարչութեան նախաձեռնութեամբ եւ համագործակցութեամբ Միաւորի ամբողջ անձնակազմի, Հայոց ազգ. «Արմէն» համալիրի, Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան (Կարմիր Խաչ) եւ Փերիոյ Կրթասիրաց միութիւնների կազմակերպած տօնահանդէսին ու միասնաբար նշելու Յիսուս Քրիստոսի Համբարձման Տօնն ու նրան միատեղած Հայ Դատի «Արձագանգ» Քարոզչական Յանձնախմբի նախաձեռնութեամբ կազմակերպւած մայիսեան յաղթանակներից Շուշիի ազատագրման 20-ամեակը:



Ս. Համբարձման Տօնի մասին նշենք, որ Միաւորի անդամուհի Հռիփսիկ Սիմոնեանը հանդէս եկաւ շնորհաւորանքի խօսքերով եւ Համբարձման խորհրդրդի ու նրա հետ կապւած աւանդութիւնների ու ծէսերի մասին բնութագրականով, իսկ տօնահանդէսը յատկանշում էր «Զան գիւում» բախտախաղով, որի համար ծաղիկներով զարդարւած մի կրպակում նախատեսել էր կարաս-վիճակախաղ, որն իրականացնում էր տարազատր աղջնակներ՝ Քրիստինէ Օհանեանի եւ Օժենի Հայրապետեանի միջոցով: Ի միջալոց երեկոյի ընթացքում նրանք հերթաբար ելոյթ ունեցան Համբարձման Տօնի խորհուրդը ներկայացնող բացադրութիւնով եւ իրանահայ բանաստեղծուհի Աննիկի գրչին պատկանող «Յանկութիւն» բանաստեղծութեան ասմունքով: Ի դէպ Միաւորը պատրաստել էր աւանդական ճաշեր, գաթա, այլ թխածքներ եւ ուտեստեղէններ, ինչպէս նաեւ կազմակերպել էր հետաքրքիր խաղեր, իսկ մասնակից դպրոցը եւ միութիւններն իրենց համագործակցութիւն էին բերել նոր ու հետաքրքրաշարժ խաղերի կազմակերպմամբ՝ մա-

նուկների համար:

Արժէ նշել, որ «Զան գիւում»-ի կարասի մէջ տեղադրւած քարերն ու աւազը բերել էին Փերիոյ գաւառի Շուրիշկան գիւղում գտնուող «Պապի Աղբիւր» կոչուող ուխտատեղիից, որը յայտնի է ժամանակին այնտեղ գտնուող Աւետարանի բուժիչ եւ իղձերն իրականացնող յատկութիւնով:

Եւ այսպէս նախադէպը չունեցող սոյն տօնախմբութեանը մասնակից հոժ բազմութիւնն առաւօտեան ժամը 10-ից սկսած մինչեւ ուշ երեկոյ վայելեց այն բոլորը, որի համար հսկայական աշխատանք էր պահանջել եւ բարձր տրամադրութեամբ ու երկու տօների խորհրդով վերանորոգւած թողեց Միութեան շրջափակը:

ՆՈՒՅԻ ԱՐԱՏԱԳՐՄԱՆ 20-ԱՐԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ՝ մայիսի 18-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան մարզասրահին կից բացօթյա տարածքում, հոժ բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ ժողովրդական տօնախմբութիւն՝ նկիրւած Շուշիի ազատագրման 20-ամեակին:



Այս հպարտադի յաղթանակին նկիրւած տօնախմբութիւնը կազմակերպել էր շրջանի Հայ Դատի «Արձագանգ» Քարոզչական Յանձնախմբի նախաձեռնութեամբ եւ «Արարատ», «Ռուբէն» Եիտասարդական եւ «Թաղէս Թաղէսեան» Պատանեկան միութիւնների համագործակցութեամբ:

Ծրագրի պաշտօնական բաժնում, որպէս հանդիսավար, շնորհաւորանքի խօսքով եւ օրան պատշաճ տեղեկութիւնների ընթերցմամբ հանդէս եկաւ Թալին Մովսիսեանը, որից յետոյ պատատի վրայ ցուցա-

Շարունակութիւն՝ 36-րդ էջում

«ՄԻԼԻԱ ԿԱՂՈՒՏԻԿԵԱՆ» ԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՏՆՕՐԷՆ՝ ԱՐՄԵՆՈՒՏԻ ԳԵՄԻՐՃԵԱՆԸ ԵՒ ՆՐԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ԽՈՒՄԲԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԻԵՑԻՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Օրերս հիւրաբար Նոր Զուղայում էր գտնուում «Սիլվա Կապուտիկեան» գրական հիմնադրամի տնօրէն՝ Արմենուհի Դեմիրճեանը: Առիթը պատեմ համարելով Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի Վարչութիւնը հանդիպում կազմակերպեց տկն. Դեմիրճեանի հետ, որին հրաւիրած եւ ներկայ էին միութեանականներ, ուսուցչուհիներ եւ արւեստի ու գրականութեամբ զբաղող անձիք:



Միաւորի Վարչութեան անունից, ողջոյնի եւ բացման խօսքով ելոյթ ունեցաւ Նայիրի Թահմազեանը, որը հակիրճ կերպով անդրադարձաւ Ս. Կապուտիկեանի կենսագրականին, այնուհետեւ մեծ բանաստեղծուհու ստեղծագործութիւնների կատարումով ելոյթ ունեցան Միաւորի «Կոունկ» ասմունքի խմբի անդամուհիներ Արփինէ Գրիգորեանը, Ալինա Տէր-Սուքիասեանը, Թալին Մովսիսեանը եւ Լեռնիկ Ծատուրեանը:



Ծրագրի երկրորդ բաժնում ներկայացուեց Արմենուհի Դեմիրճեանի հակիրճ կենսագրական, որից յետոյ հրաւիրեց իր խօսքն արտայայտելու: Նշենք, որ երբ Միաւորի «Կոունկ» համոյթը 2001

թաւկանին մասնակցում էր «Մէկ ազգ-մէկ մշակոյթ» համահայկական մշակութային փառատօնին, տկն. Դեմիրճեանեղել է համոյթի համար փառատօնի կազմակերպիչների կողմից նշանակած պատասխանատու եւ ուղեկից, հետեւաբար նա իր խօսքն սկսեց այն օրերի յիշողութեամբ եւ բարձր գնահատեց «Կոունկ» ասմունքի խմբի ելոյթները՝ երեւանեան բեմերում, որոնք «*Նոր-Չուղայեցիների ճիշտ շեշտադրւած ու մաքրամաքուր հայերէնը մատուցեցին հպարտացող դահլիճի առջեւ*»:

Խօսելով Սիլվա Կապուտիկեանի պահանջատէր ոգու ու նրա տեսնող աչքի բացառիկ կարողութեան մասին ասաց. «... *Քչերին է տրւած տեսնել, հասկանալ եւ ձեւակերպել. Կապուտիկեանն այդ ուժն էր. նա սովորեցնում էր մեզ մեր տեսածը զնահատել եւ յատկապէս հասկանալ այնպէս՝ ինչպէս պէտք է*», իսկ Կապուտիկեանի տուն-թանգարանի եւ գրական հիմնադրամի գործունէութեան ու նպատակների մասին խօսելիս, շեշտը դրեց, յատկապէս բանաստեղծուհու գրական ժառանգութեան վերահրատարակման ու տուն-թանգարանը պատշաճ տեսքի բերելու ծրագրերի մասին եւ յոյս յատնեց, որ միասնական ուժերով կարողանան իրականացնել այն:



Նա իր խօսքերի մէջ դրատանքով խօսեց իրանահայութեան, մասնաւորապէս ջուղայեցիների մասին եւ նրանց անանելով «Մայր հայրենիքի ընտրանի հատածի շառաւիղներ», ասաց. «*Առանց չափազանցութեան եմ ասում «ընտրանի հատած», որովհետեւ Շահ Աբբասը պատահական չէր, որ մեր հողից կտրեց ձեզ եւ բերեց իր երկիր... Այստեղ՝ այդ սերունդի ստեղծածը ես տեսայ եւ հասկացայ, որ հայի ուժը անբեկանելի է եւ ուղիղ ճանապարհ անցնելու յատկութիւն ունի*»: Շարունակութիւն՝ յաջորդ էջում

«ԹԱԴԷՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ» ԳԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝

ԱՋԳԱՅԻՆ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԹԱԴԷՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ ՅԻՆԱՏԱԿԻՆ

Նախաձեռնությամբ «Թադէոս Թադէոսեան» Պատանեկան Միութեան, ուրբաթ՝ մայիսի 4-ի առաւօտեան, Նոր Զուղայի Հայոց Ազգային Գերեզմանատանը, հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանի միջոցով Հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ ազգային կուսակցական գործիչ Թադէոս Թադէոսեանի եւ նրա զինակիցների յիշատակին:



Գաղափարական նիրեալ Թադէոս Թադէոսեանը ծնել է 1881 թականին՝ Հայաստանում: Նա եղել է Հ.Յ. Դաշնակցութեան անդամ եւ մասնակցել է Սարդարապատի ու Բաշ Աբարանի հերոսական ճակատամարտերին: Հետագայում անցնելով Իրան՝ Թադէոսը լծուում է կուսակցական եւ ազգային գործունէութեան, որից յետոյ հրաւիրուում է Նոր Զուղա եւ որպէս հայերէն առարկաներ դասաւանդող ուսուցիչ՝ ծառայում տեղի հայոց դպրոցներում: Եղել է Ասեւ Սպահանի Պետական համալսարանի Հայագիտական ամբիոնի դասախօս: Թադէոսեանը 1933 թականին կուսակցութեան որոշմամբ, մեծ ջանք գործադրեց շրջանի պատանեկան միութեան հիմնադրման եւ կազմակերպման ուղղությամբ, որն իր ակտիւ գործունէութիւնն է ծաւալում մինչեւ այսօր:

Ազգային-կուսակցական անխնայ գործիչ Թադէոս Թադէոսեանն իր մահկանացուն կնքել է 1975 թականի ապրիլի 7-ին, Նոր Զուղայում, 94 տարեկան հասակում:

Մայիսի 4-ին, Պատանեկան Միութեան անդամները եւ նրանց պա-

տասխանատուները բոլորելով Միութեան հիմնադիր Թադէոս Թադէոսեանի շիրիմի շուրջ, ծաղիկներ մատուցեցին նրա շիրիմին եւ աղօթեցին անխնայ գործիչի եւ նրա գաղափարակից ընկերների հոգու խաղաղութեան համար:

Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ՝ հոգ. Տ. Անանիա վրդ. Գունանեանը յաւուր պատշաճի այսպէս արտայայտեց. «Միրելի՛ պատանիներ, այսօր մենք մեր յարգանքի նւագագոյն տուրքն ենք մատուցում այնպիսի գործիչների, ովքեր մեր կեանքի, առաքելութեան եւ ծառայութեան սկիզբն են հանդիսացել: Նրանք ոչ միայն ազգային, այլեւ հաւատի գործիչներ են: Հաւատ՝ յեղափոխութեան, պայքարի եւ մտքի նկատմամբ: Այս օրը թող սովորական օր չլինի ձեզ համար, քանի որ նրանք ձեզ փոխանցել են նոր ուժեր: Դուք նրանց փոխանցած շղթայի նոր կապանքներն էք, որը պէտք է շարունակեք նրանց նւիրական գործը եւ յիշէք ազգի նւիրեալների պատգամը մեզանից իւրաքանչիւրին այն է, որ շարունակենք իրենց առաքելութիւնը, ծառայութիւնը եւ պայքարը»:

Այնուհետեւ հնչեց Տէրունական աղօթքը, որից յետոյ ներկաները խնկարկեցին շիրիմաքարը:

Արարողութեան աւարտին Միութեան պատանիներն երգեցին «Թիկունքդ լայն» յեղափոխական երգը:

Շարունակութիւն՝ նախորդ էջից

«ՄԻԼԻԱ ԿԱՂՈՒՏԻԿԵԱՆ» ԳՐԱԿԱՆ...

Ծրագրի յաջորդ բաժնում ցուցադրեց մի տեսանիւթ, որը հագեցած էր «Եօթ տասնեակ տարի» վաւերագրական տեսանիւթերից, ժամանակակից մեծութիւնների տեսակէտներով պատրաստուած եւ նրա «Վերջին զանգ» հատորի շնորհանդէսից ու Կապուտիկեանի յիշատակին ներուած «Երգ երգոց» հաղորդաշարից հատուածներով:

Վերջում տկն. Դեմիրճեանի եւ Կապուտիկեանի տուն թանգարանի համար նախատեսած յուշանւէրները յանձնեց Միաւորի Վարչութեան նախագահ Քարմէն Ղեւեանը, իսկ տկն. Դեմիրճեանը պատուոյ գիր յանձնեց «Կռունկ» ասմունքի խմբի ղեկավար Ռիմա Սիմոնեանին՝ մշակոյթի զարգացման գործում ունեցած անմնացորդ ներդրման համար:

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ՄԵՃԱՐՍԱՆ ԵՐԵԿՈՑ ՓԵՐԻՈՑ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԼԵՍԱԶԵՆՆՈՒԹԵԱՄԲ

Սույն միջոցառումը տեղի ունեցավ ապրիլի 11-ին Փերիոյ Կրթասիրաց Միության կենտրոնատեղիում, ներկայությամբ անդամուհիների և հրապարակների:

Ձեռնարկը բացված յայտարարեց Յ. Ծիրազի բանաստեղծության հետևեալ տողերով տպագրած բացիկ-հրաւերների մէջ.

*Մօրս սրտի հետ աշխարհն եմ չափել,
էլի մեծ էր նա, մեծ էր ու անգին,
Արեւ աչքերի լոյսն է նա թափել՝
Լուսնեակ դառնալով որդոց օրոցքին:*

*Եւ հիմա քիչ է, թէ աչքերս տամ,
Թէ սիրտս հանեմ ու տամ մայրիկիս,
Ա՛խ, մայր երգելուց ինչպէս կշտանամ,
Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:*

Ապա Միության Վարչության անունից տկն. Վարդուհի Ք. Օհանեանը բարի գալուստ մաղթեց բոլորին, գեղեցկօրէն ներկայացնելով հայ մօրը որպէս նիրաճ, զոհաբերող և ընտանիքի սինը հանդիսացող էակ: Այնուհետև երգչուհիներ Զարեմուշ Աղուրեանը և Անասիկ Յովսէփեանը, իրենց քաղցր ձայնով երգեր նկարեցին հայ մօրը:

Մթնոլորտն անելի ջերմացրեց նաև Միության պարախումբը, տկն. Ալինա Գրիգորեանի ղեկավարութեամբ:

րութեամբ:

Օրայ հանդիսավար տկն. Անահիտ Կիրակոսեանը մերթընդմերթ մօր մասին գեղեցիկ արտայայտութիւններով անելի տպաւորիչ էր դարձնում երեկոն:

Ասոյթներով հանդէս եկան Մարտունի Խաչիկեանը և Սինթիա Մինասեանը, որոնց յաջորդեցին մանուկ ասմունքողները ցոյց տալով նաև թէ ինչպէս են զանազանում իրենց մօր ձայնը և ըստ այնմ արձագանգում:

Տկն. Անահիտ Կիրակոսեանը, առիթն օգտագործելով, որպէս «Հայ Գրքի Տարի», ներկայացրեց տկն. Լինետ Ծառուկեանի գրչին պատկանող «Հայ Մանկան Տարւայ» առիթով «Լալալի արկածներ»-ը մանկական գիրքը: Այս առիթով պրն. Հայկ Հայրապետեանը, թէ՛ որպէս Միության նախագահ և թէ՛ որպէս գրող, բանաստեղծ ու մտաւորական, անձամբ շնորհաւորեց և գնահատեց հեղինակին:

Միջոցառման ընթացքում երգեհոնի մօտ էր Էդիկ Մանուկեանը, իր աշխոյժ մասնակցութեամբ:

Այնուհետև բեմահարթակ հրաւիրուեցին նաև 4-ից անելի զաւակներ ունեցող բազմազաւակ մայրերը, օրայ խորհրդանշող կարկանդակը կտրելու:

Ծրագիրն աւարտեց հիւրասիրութեամբ, երգ ու պարով և ուրախ տրամադրութեամբ:

Նշելի է, որ ծրագիրն իրագործեց Միության կանանց միաւորի ջերմ համագործակցութեամբ:

*Փերիոյ Կրթասիրաց Միութեան
Կենտրոնական Վարչութիւն*



Շարունակութիւն՝ 33-րդ էջից

ՃՈՂՈՎՐԴԱՆՆԵՆ ՏՕՆԱՎՄԵՌՈՒԹԻՒՆ...

դրուեց «Շուշիի լեգենդը» տեսանիւթը, որտեղ պատկերւած էին Շուշիի ռազմական յաղթանակին նախորդող և յաջորդող օրերից հատածներ:

Այնուհետև երիտասարդ երգիչներ՝ Ալլին Քեշիշեանն ու Էմմանուէլ Քամարզարեանը ներկաներին ոգեւորեցին ազգային երգերի կատարմամբ:



Ծրագրի պաշտօնական բաժնի աւարտին ժողովուրդըն առիթ ունեցավ մօտենալով տարածքում տեղակայւած հրաձգութեան, բերդի գրաման ու կարակէ մրցոյթի կրպակներին՝ օգտուել զարճալի խաղերից և հաճելի պահեր անցկացնել: Յատկանշական է, որ տարածքի տարբեր բաժիններում փակցել էին Շուշիի ազատագրմանն առնչող տեղեկութիւններ, որոնցով ներկաները կարողանում էին ամբողջացնել իրենց գիտելիքները՝ անզուգական յաղթանակի կապակցութեամբ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 94-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ



ղուփին: Ծրագրի բացման խօսքով հանդէս եկան օրայ հանդիսավարներ տկնք. Մատիթա Քեշիշեանը եւ Անահիտ Օհանեանը, որոնք Յանձնախմբի անունից բարի գալուստ մաղթեցին բոլոր ներկաներին եւ նշեցին մայիսեան բոլոր տօները, որոնք հայ ժողովրդի պայքարի եւ պաշտպանութեան, իր երկրին տէր կանգնելու խորհրդանիշն են դարձել, եւ դասեր քաղելով պատմութիւնից, հայ ժողովուրդը կը սկսի ապրել անվախութեան եւ նիրաւածութեան ոգով, իսկ այդ ոգին կօզնի մեզ հասնել մեր նպատակներին: Ընորհաւորելով բոլորին Մայիս 28-ի առիթով բեմ հրաւիրեցին օրայ բանախօս Իսլ. Խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան մեծարգոյ պատգամատր դոկտ. Կարէն Խանլարեանին:



Դոկտ. Խանլարեանը շնորհակալութիւն յայտնեց ընձեռուած առիթի համար, յայտնելով նաեւ իր ուրախութիւնն առաջին անգամ այս բարեբաստիկ առիթով լինել Ծահինշահի րում եւ անցնելով նիւթին նշեց. *«Մենք դեռ պատանի տարիքից սովորել ենք Մայիս 28-ի նշանակութեան մասին եւ հիմա, երբ ունենք վերանկախացած Հայաստանը ահամայ աւելի շատ ենք խորհում այդ ահտի մասին: Այդ ճակատագրական պահին եթէ մեր ազգային ղեկավարութիւնը չհռչակէր անկախութիւնը, չհռչակէր իշխանութիւնը հայկական տարածքների եւ գաւառների վրայ, չէր գոյանայ Հայաստանը եւ մենք այսօր չէինք ունենայ վերանկախացած Հա-*

Ուրբաթ՝ յունիս 1-ին, հովանաւորութեամբ Թեմիս բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի, Ծահինշահի Մայիս 28-ի տօնակատարութեան յանձնախումբը Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 94-ամեակի առիթով, «Սրբոց Վարդանանց» դպրոցի բակում կազմակերպել էր հանդիսատր երեկոյ: Տօնակատարութեանը ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները եւ Ծահինշահիի հայ համայնքը:



Երեկոն բաղկացած էր հետեւեալ բաժիններից՝ Հանրապետական Մաղթանք, Դրօշակի արարողութիւն, բանախօսութիւն եւ գեղարւեստական ձեռնարկ՝ Հայաստանից ժամանած վաստակատր ժողովրդական երգիչ՝ Արսէն Գրիգորեանի մասնակցութեամբ: Գերշ. Տ. Բարգէն եպս. Չարեանի, հոգշ. Տ. Անանիս վրդ. Գունանեանի եւ արժն. Տ. Վարդան քինչ. Աղաբաբայեանի միջոցով կատարւեց Հանրապետական Մաղթանքը: Այնուհետեւ, Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի դրօշների օրհնութիւնից յետոյ, Ծահինշահիի սկաւտների միջոցով կատարւեց դրօշակի արարո-

յաստանը»:

Դուկտ. Խանլարեանը հանգամանօրէն պատմեց այն օրերի Հայաստանի ներքին վիճակի, քաղաքական եւ տնտեսական կեանքի մասին: Նշեց նաեւ որ այդ 2.5 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետութիւնն ունեցել է մի շարք ձեռքբերումներ, որոնցից էին Երեւանի ռադիոյի հիմնադրումը, առաջին համալսարանի հիմնադրումը՝ Ալեքսանդրապոլում, որը հիմք է հանդիսացել այժմեան Երեւանի համալսարանի եւ այլն: «Հայաստանի հիմնադրման եւ անկախացման մէջ անգուղակիւս դեր է ունեցել Արամ Մանուկեանը: Եթէ չլինէին Արամ Մանուկեանի վճռորոշ որոշումները, մենք հիմա չէինք ունենայ մեր անկախ պետութիւնը: Սակայն Արամ Մանուկեանի հօր դերակատարութեան եւ առանցքային նշանակութեան հարցն իր արժանի տեղը չի գտել Հայաստանում: Այնպէս, որ Հայաստանում նոյնիսկ չկայ Արամ Մանուկեանի անուանով մի փողոց կամ պողոտայ: Սակայն յոյսով եմ, որ այս հարցերը կը սրբազրկեն մեր պետութիւնը դեռ շատ երիտասարդ է եւ երկար կեանք ունի առջեւ: Սակայն անկախութիւնը յաւերժացնելու համար մենք պէտք է լաւ գիտակցենք Մայիս 28-ի խորհուրդը եւ փոխանցենք մեր սերունդներին»,- ասաց բանախօսը:

